

21.302

33

---

7-13



0179 27/258



3379  
Պ-13

Հրատարակ. Բազմադ. Հայոց Կուլտուրական Միութեան  
Հրատարակչական Մասնաճիւղի № 21

Ե Ր . Գ Ա Լ Ե Ա Ն

ՄԻՔԱԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԷՅՐԻԱՆ

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА  
Издательской Секции № 21

Ер. ПАЛЯНЪ

Экономическая теорія Մ. Ջալաբաճյան

Электротпечатня газ. „БАКУ“  
Баку 1911 г.



**ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԻ

**ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ**

ՀԵՏԵՒԵՍԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. «Պատանեկան Գրադարան» №№ 1—17  
Իւրարանչիւր դիրքը . . . . . — p. 30 4.
  2. Хрестоматія—Ս. Մանդիկեանի . . . . . — „ 75 „
  3. Գիւան հայոց պատմութեան—Գիւս ա. ք.  
Արանեանի . . . . . 4 „ — „
  4. Բանաստեղծութիւններ — Յ. Յովնանի-  
սեանի . . . . . 1 „ 50 „
  5. Վէրք Հայաստանի—Ս. Արոփեանի . . . . . — „ 50 „
  6. Վլչկէրժ Տէլլ—Վ. Օսրոգորսկու . . . . . — „ 5 „
  7. Յրիւի—Վ. Օսրոգորսկու . . . . . — „ 5 „
  8. Գործնական շերամագրութիւն—Կ. Մե-  
լիխ-Շահնազարեանի . . . . . — „ 5 „
  9. Բամբակի մշակութիւնը — Ե. Տարանի-  
նովի (Թարգմանութիւն) . . . . . — „ 3 „
  10. Մանր վարկի հաստատութիւնները . . . . . — „ 5 „
  11. Ռուսական աշխարհ—Կ. Մելիխ-Շահնա-  
զարեանի . . . . . — „ 5 „
- ԿՐԻՍԿՆԵՐ ՀԱՅ ՊԱՏՄՈՒԹ. №№ 1—11**
12. Արաւշէս Երկրորդ—Վ. Փափազեանի . . . . . — „ 15 „
  13. Գագիկ Երկրորդ նոյնի . . . . . — „ 15 „
  14. Վարդանանց պատերազմը — նոյնի . . . . . — „ 30 „
  15. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ—Մ. Առա-  
փեանի . . . . . — „ 15 „
  16. ահակ և Մեծրոպ—Վ. Փափազեանի . . . . . — „ 15 „
  17. Վահան Մամիկանեան—Մ. Առափեանի . . . . . — „ 15 „
  18. Թորոս իշխան Վ. Փափազեանի . . . . . — „ 15 „
  19. Լեան Երկրորդ նոյնի . . . . . — „ 15 „

11-220

333  
11-13  
am

Հրատարակ. Բագուայ Հայոց Կուլտուրական Միութեան  
Հրատարակչական Մասնաճիւղի № 21

1094 15 JAN 2010

5 FEB 2007

300  
1558-ՊԱ

ԵՐ. ՊԱԼԵԱՆ



33

**ՄԻՔԱԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ**

9001  
29662

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԷՕՐԻԱՆ**



Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА  
Издательской Секции № 21

Ер. ПАЛЯНЬ

**Экономическая теория М. Жалбаджяна**

Электропечатня газ. „БАКУ“  
Баку 1911 г.



17 JUL 2013

008  
110-8221

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1910 թվականի հոկտեմբերի 27-ը Մ. Նալբանդեանի ծննդեան ութսունամեակն է:

Ցանկանալով էապէս պատկերացնել հասարակութեան առաջ մտածողի և գործիչի յիշատակն, ես վճռեցի տպագրել այս գրածքը, որը թերի յիշողութիւն է տասը տարի առաջւայ դասախօսութեանս Մ. Նալբանդեանի «Երկրագործութիւնն իբրև ուղիղ ճանապարհ» գրքոյկի մասին:

Այժմ չունենալով ձեռքի տակ ոչ յիշած դասախօսութիւնս, ոչ «Երկրագործութիւն» գրքոյկն, և ոչ եւրոպական գրողների անհրաժեշտ բոլոր աշխատութիւններն, ես բաւականացայ իմ յիշողութեամբ: Բացի այդ, անկախ պատճառներով, ես ստիպւած եղայ զանց առնել մի շարք հիմնական խնդիրներ, ինչպէս նաև վերացնել գրածքիս քննադատական մասի էական կէտերը:

Նպատակ ունենալով որոշել Մ. Նալբանդեանի տեղն ընդհանուր եւրոպական և հայկական մտքի զարգացման մէջ, այս տեսութիւնը սպառուում է նրա «Երկրագործութիւն» գրքոյկի քննութեամբ, որի մէջ արտայայտւած է նրա դաւանանքը: Այս տեսակէտից մինչև այժմ ոչինչ չէ աււած Մ. Նալբանդեանի և նրա յիշած գրքոյկի մասին: Մ. Նալբանդեանը ծանօթ չէ հասարակութեան իր դաւանանքով և էութեամբ:

Այս տեսութեան շրջանակից դուրս համարեցի ես, իբրև երկրորդական, Մ. Նալբանդեանի պուրբիցիստիկան



„Հիւսիսափայլ“ի մէջ, և նրա միւս աշխատութիւնները, թէև այդ մասն ևս ունի իր բնորոշ նիւթը: Մ. Նալբանդեանի կենսագրութիւնն ես յիշատակում եմ համառօտ և հիմնական կէտերով: Ի դէպ, պիտոյ է յիշել, որ նրա պուրջիցիստիկան աշխատութիւնների մասին տպւած ուսումնասիրութիւնները թերի են և անբովանդակ, որպէս նաև անկատար են նրա մասին տպւած կենսագրական տեղեկութիւնները: Պակասում են այդ ուսումնասիրութիւնների մէջ հայեցակէտ և բնորոշումն, իսկ կենսագրութիւնների մէջ չկան էական ծանօթութիւններ նրա Մօսկւայ և Պետերբուրգ ապրած տարիների մասին, և առաւելագոյն կարևոր, այն տարիների մասին, որ նա ապրեց Հնդկաստան, Պօլիս և Եւրոպայ:

Մ. Նալբանդեան ծանօթ է հասարակութեան միայն իբրև աշխատակից «Հիւսիսափայլ»ի և գործակից Մ. Նազարեանցի: Նա ծանօթ է իբրև հաւատարմատար Նոր-Նախիջևանի, ծանօթ է իբրև հեղինակ մի շարք բռնաստեղծութիւնների, որոնք, ի դէպ ասած, առանձնակի են իրանց ոյժով և բովանդակութեամբ: Սակայն այս ամենի մէջ չէ Մ. Նալբանդեանի էութիւնն, այս ամէնը նրա առաջին և անպատրաստ շրջանն է, երկրորդական իր նշանակութեամբ: Սպազային, երբ նրա աշխատութիւնների ժողովածուի մէջ կ'ամփոփւի նրա «Երկրագործութիւնն» և լոյս կընծայւի նրա մանրամասն կենսագրութիւնն, այն ժամանակ, հասարակական նպաստաւոր պայմանների մէջ, Մ. Նալբանդեանն անշուշտ կգանի իր յատուկ տեղը հայկական գիտական-հասարակական մտքի զարգացման մէջ:

Ե. Պ.

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայկական ժողովրդային դաւանանքի առաջին ներկայացուցիչը, Մ. Նալբանդեան, ծնւած է Նոր-Նախիջևանի մէջ, 1830 թւականի հոկտեմբերի 27-ին:

Նախնական կրօնական կրթութեամբ, 1850-ին նա գրում էր «Արարատ»ի մէջ, այնուհետև ինքնուսութեամբ, 1853-ին նա հասաւ Պետերբուրգի համալսարանի արևելեան լեզուների ֆակուլտետը, ձեռք բերեց հայերէն լեզւի դասատուի իրաւունք, և ապա անցնելով Մօսկւայ, եղաւ Լազարեան ձեմարանի ուսուցիչ: Մէկ տարի յետոյ նրան հեռացրին պաշտօնից, և նա դարձաւ բժշկական ֆակուլտետի ազատ ունկնդիր: Այդ ժամանակ, Չերնիշեվսկու և Տօբբօլիբօլի շրջանները, խմբւած «Современникъ»ի շուրջ, ստեղծեցին ժողովրդային—անտեսական մի հոսանք, որը յայտնի է «народничество» անւան տակ և որն ունեցաւ իր ազդեցութիւնը Մ. Նալբանդեանի վրայ: „Հիւսիսափայլ“ի հիմնադրման, 1858.—1860 թւականներին նա եղաւ այդ ամսագրի ամենատաղանդաւոր աշխատակիցը:

Առողջութեան վերականգնման նպատակով, 1859-ին Մ. Նալբանդեան մեկնեց Եւրոպայ, որտեղից միքանի ամիս յետոյ վերադարձաւ Պետերբուրգ: Այդ ժամանակից նրա համար սկսւում է նոր շրջան: Այդ թւականին է վերաբերում նրա «ազատն ասուած» բանաստեղծութիւնը, որը հսկայօրէն քանդակւած, յաւերժական արձանն է հասարակական զինուորի, և որի մէջ աւետարա-



նախն էկտազը, սպարտական ոգին և եւրոպական գաղափարը Մ. Նալբանդեանի միաձոյլ տիպարն են ներկայացնում:

Ապա, 1860-ին նա մեկնեց Հնդկաստան, իբրև ընտրւած հաւատարմատար, Նոր-Նախիջևանի հասարակութեան կտակած ժառանգութեան ձեռք բերման համար: Արտասահման նա մնաց երկու տարի, շրջելով Եւրոպան, անցաւ Փարիզ և Լոնդոն, ուր ապրեց Բակունինի, Հերցենի, Տուրգենևիի և այլ ծանօթների շրջանի մէջ:

Եւրոպայի մէջ Մ. Նալբանդեան ենթարկւեց նոր ազդեցութեան, որը միանգամայն համապատասխան էր իր յուզիչ տեմպերամենտին և ժողովրդային ուղղութեան: Հետաքրքիր և ընդունակ, ուսանելով և մարզկանց հետ շփուելով, նա կարճ ժամանակի մէջ վերջնականապէս ձուլւեց և կազմակերպւեց իբրև մտածող ու գործիչ, իր դաւանանքով և զգացմունքներով:

Այդ ժամանակ ետում էր կրկնակի կռիւն Իտալիայի անկախութեան և ազատութեան, իբրև արտայայտութիւն կապիտալիզմի և ազգային բուրժուազիայի զարգացման, ընդդէմ Ավստրիայի—մղւած Կարիբալդի<sup>1)</sup> ձեռքով, և յանուն ժողովրդային ափրայետութեան—Մացցինի<sup>2)</sup> միջոցով, որը Լոնդոնի մէջ հիմնել էր համաեւրոպական կոմիտէա, ամենուրեք հասարակապետութեան իրագործման նպատակով: Այս հոսանքի ազդեցութեան ներքոյ, Հերցեն<sup>3)</sup> և Բակունին<sup>4)</sup> ծրագիր ունէին, Իտալիայի աջակցութեամբ, պանսլաւիստական ֆեդերալիստ պետութիւն

1) Garibaldi—Memorie autografiche, 1888.

2) Mazzini—Scritti editi ed inediti, 1886, նաև ուրիշներ.

3) Herzen—Le peuple russe et le socialisme 1850: Von andern Ufer, 1850.

4) Իր Ֆրանսերէն նամակը Գարիբալդիին, 10 մայիս 1862 („Былое“ 1906 № 10) և իր բրոշիւրները: Նաև R. Meyer—Eman- sations Kampf des vierten Standes.

հիմնել, ընդդէմ Ավստրիայի, Պրուսիայի և Թիւրքիայի: Նոյն հոսանքով մղւած և նրանց յարակից, Մ. Նալբանդեան ևս ձեռնարկեց մի գործունէութիւն Թիւրքահայերի վերաբերմամբ, թղթակցելով Սվաճեանի հետ<sup>5)</sup> Փարիզից —Պոլիս, ուր նա եղել էր իր ժամանակին: Թիւրքահայ ազգային շարժման առաջին ազդը տւեց Մ. Նալբանդեան, կուսակցութիւնների երևումից շատ առաջ, հանդիսանալով թէօրիական և պրակտիկական քարոզիչն ու ազիտատորը, և 1860—1862 թւականներին կրկնակի շրջելով Եւրոպայի գլխաւոր քաղաքները, նաև Պոլիս, Եգիպտոս, Յէյլոն, Երուսաղէմ և այլն:

Նոյն թւականներին Ռուսաստանի մէջ յարուցւած էր գիւղացիների և հողային հարցն, իսկ Եւրոպայի և յատկապէս Փարիզի մէջ յուզուած էին սնտեսական—քաղաքական խնդիրներ, գլխաւորապէս Պրուզոնի և Բլանկիի թէօրիաներով և գործունէութեամբ<sup>6)</sup>: Այդ հարցերին արձագանգ տւեց և այդ սկզբունքների մէջ մասն ունեցաւ նաև Մ. Նալբանդեան, իբրև ներկայացուցիչ հայ հասարակութեան, հրատարակելով 1862-ին Փարիզի մէջ իր «Երկրագործութիւն» դաւանանքային գրքոյկը<sup>7)</sup> որն և նրա առաջին և միակ այդ տեսակի գրւածքն է:

Այսպէս Մ. Նալբանդեան կորցրեց իր նախկին հետաքրքրութիւնը դէպի պուրլիցիստիկան «Հիւսիսափայլ»ի մէջ, ինչպէս նաև դէպի ուրիշ հասարակական գործերն, և կազմակերպւած իրան ընտանի միջնորդի մէջ, հասունացած իր ուղղութեամբ, երևան եկաւ իբրև առաջին հայ թէօրէտիք սնտեսական-դէմակոսիական խնդիրների:

Սակայն Մ. Նալբանդեանի այս նոր, էական ուղղութեամբ գործունէութիւնը վերջացաւ, հազիւ սկսւած:

5) Սվաճեանի նամակը Մ. Նալբանդեանին („Былое“ 1906 № 10).

6) Տես ներկայ գրւածքի յետադայ էջերը:

7) Սիւմէօն Մանիկեան (պսևդոնիմ) — Երկրագործութիւնն իբրև ուղիղ ձանապօղ, 1862 Փարիզ:



Եւրոպայից 1862-ին վերադառնալով Պետերբուրգ և ապա Նոր-Նախիջևան, նա ենթարկւեց խուզարկութեան, որի միջոցին նրա մօտ գտնուեցին Բակունինի, Սվաճեանի և Տուրգենեվի նամակները, ծածկագիր գրութեան բանալին և իր ճանապարհորդական մարշրուտը<sup>8)</sup>: Նա 1862-ի յուլիսի 14-ին ձերբակալւեց Նոր-Նախիջևանի մէջ և ուղարկւեց Պետրօպօլսկի ամրոցը: Մ. Նալբանդեանի դէմ յարուցւած մեղադրանքն այն էր, որ նա, նախ, յարաբերութեան մէջ էր «Լօնդօնի պրօպագանդիստներին հետ»<sup>9)</sup>, և ապա, հրապարակի վրայ էր «Երկրագործութիւն» գրքոյկը: Երեք տարի յետոյ նա ուղարկւեց Սարատով նահանգն, և այլևս մահամերձ թոքախտաւոր, հասաւ Կամիշլին քաղաքն, ուր 1866 -ի մարտի 31-ին մահը տարաւ նրան 36 ամեայ հասակի մէջ<sup>10)</sup>:

Հոգեկան և մտաւոր տաղանդը, հասարակական մտքի և գործի եռանդն և երիտասարդ ոյժերն այսպէս վաղաժամ շլատուեցին և մաշուեցին, թափառումների, տառապանքների և մրցման մէջ, հիւսիսից հարաւ և արևելքից արևմուտք, մինչև Կամիշլին, որն և եղաւ Մ. Նալբանդեանի աստանդական կեանքի վերջին կայանը:

Մ. Նալբանդեանի, իբրև անհատի և գործիչի մասին, հիացմունքով են խօսում իր ուսու բարեկամները: Նա ճանաչւած էր իբրև ազատական, ազնիւ և եռանդուն անձնաւորութիւն: Հերցէն իր մի նամակի մէջ, ուղղւած Սերնօ-Սօլօվեօվիչին, Մ. Նալբանդեանին անւանում է «ոսկեձոյլ հոգի, նւիրւած անշահօրէն, նւիրւած միամտօրէն, մինչև սրբութեան աստիճան»<sup>11)</sup>: Բակունին

<sup>8)</sup> Տպագրւած «Былое» 1906 № 6, 12-ի մէջ:

<sup>9)</sup> Հերցէն, Բակունին և այլն:

<sup>10)</sup> Կենսագրական փաստերն առնւած են մասամբ պաշտօնական թղթերից («Былое» 1906 №№ 9, 12), և մասամբ «Գաղափար» ժողովածուից (1894):

<sup>11)</sup> «Былое», 1906 № 6.

գրում էր իր եղբօր կնոջ. «Ծանօթացիր Նալբանդեանի հետ և փայփայիր նրան, նա ոսկի մարդ է, ամբողջովին հոգի և անձնւիրութիւն, Տուրգենեվի մէջ չկայ այն սուրբ պարզութիւնը, որն ունի Նալբանդեան, նա տիրում է ոչ խելքով, այլ սրտով, թէև գուցէ, իբրև իսկական հայ, նա շատ խորամանկ է, երբ հարկաւոր է այդ»<sup>12)</sup>: Նոյն թւականին, 1862-ի հոկտեմբերին, Բակունին գրում էր Տուրգենեվին. «Իմ երկրորդ հոգսը Նալբանդեանն է, ասում են նա եղել է Պետրօպօլսկի ամրոցի մէջ, իսկ այժմ կորել է, ոչ ոք չգիտէ թէ ուր»<sup>13)</sup>: Իսկ Սվաճեան, Պօլսից նրան գրած իր նամակի մէջ, գանգատելով հայրենակիցների անտարբերութեան և թուլութեան համար, աւելացնում է. «Կլիտոյ էր մեզ այստեղ ունենալ ձեր կազմի մի քանի անձնաւորութիւններ»<sup>14)</sup>:

Մ. Նալբանդեանի մասնաւոր կեանքն անյայտ է մեզ: Նրա բանաստեղծութիւնները, որոնց մէջ կարող էին ցօլանալ անհատական զգացմունքներ, սնւած են ամբողջովին հասարակական և քաղաքացիական մօտիվներով: Մտածողի և գործիչի զրահաւոր ասպեան է մեր առաջ, որը թափառ շրջեց կէս—հողագունդը, որպէս «ազատութեան զրւած զինւոր»: Երևեց նա իբրև տարօրինակ մէտէօր հայկական նորագոյն մտքի հորիզոնի վրայ, վերածնութեան նախընթաց գիշերին, և հսկայօրէն սուտանելով, անցաւ երկնակամարից ու չքացաւ, «յետքից պայծառ գիծ թողած», ինչպէս այն «վայր ընկնող ատղերը», որ երգեց ինքը սրտառուչ հնչիւններով:

Թաղւած է Մ. Նալբանդեան իր ծննդավայրի, Նոր-

<sup>12)</sup> Ibid. թէև վերջին դարձւածքը Բակունին գործածում է լաւ իմաստով, սակայն այդ անհիմն և գուեհիկ աղբային—առասպական հասկացողութիւնը մրանգամայն բնորոշ է պանսլավիստ և սլավօֆիլ Բակունինի մէջ:

<sup>13)</sup> Ibid.

<sup>14)</sup> Ibid. № 10



Նախիջևանի, քաղաքից մի քանի վերստ հեռու, Ս. Խաչ վանքի սաղարթախիտ և զովաշունչ պարտէզի մէջ: Միայն պատահական ճանապարհորդն, ի թիւս այլ հետաքրքիր բաների, գնում է զիտել նաև գերեզմանն, ուր հանգչում է փոշիացած ածիւնն անհանգիստ ժողովրդային իդէօլօգի, որի նմանները հազազիւտ են ծնում, մանաւանդ հայ կեանքի մէջ:

**Ս. ՆԱԶԱՐԵԱՆ, Գ. ԱՐԾՐՈՒՆԻ և Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.**

Մ. Նալբանդեանի գործունէութեան շրջանն անցած դարի 60-ական թւականներն են, երբ առաջացաւ մի ամբողջ հոսանք, իր գործիչներով, որոնց ժամանակակից էր և Մ. Նալբանդեան:

Ռուսաստանի անտեսական—հասարակական կեանքի հետ կապւած, հայկական կեանքն և գրականութիւնն ևս այդ թւականներից ենթարկւեցին փոփոխութեան: Ինչպէս որ XXIII-րդ դարի ֆրանսիական էնցիկլօպեդիստները,<sup>15)</sup> նորածին կապիտալիզմի և բուրժուազիայի նախամարտիկ իդէօլօգներն ու լուսաւորիչները, ստեղծեցին բուրժուական մտաւոր քաղաքակրթութիւնը, պայքարելով ֆէօդալականութեան և հոգևորականութեան դէմ, նոյնպէս և XIX-րդ դարի 40 և 50-ական թւականների նուս գապադնիկներն<sup>16)</sup> առաջացրին Ռուսաստանի բուրժուական լուսաւորութիւնն, ընդդէմ սլավեանօֆիլներին<sup>17)</sup>: Նոյնը կատարւեց 50-ական թւականների վերջերից հայկական ստանմանափակ կեանքի մէջ, իբրև մտաւոր—պոլիտիցիա-

<sup>15)</sup> Վօլտէր, Ծաղամբեր, Դիդրօ և այլն:

<sup>16)</sup> Западники—Բեկինսկիյ, Գրանսօվսկիյ և այլն:

<sup>17)</sup> Славянофилы—Կիրէեվսկի, Սամարին և այլն:

տական հոսանք: Ս. Նազարեանցն<sup>18)</sup> եղաւ առաջին արտայայտիչն այս շարժման, որից սկզբնաւորութիւնն առաւ արդի հայ հասարակութիւնը:

Այդ շարժումը պայմանաւորւած էր լեզւի, մտքի, գիտութեան և կեանքի աշխարհականացումը և անհատի քաղաքացիական զգացմունքներով: Այս ամենն իդէօլօգիական ձևակերպումն էր երկրի մէջ սկիզբն առած անտեսական ձևափոխութեան, կապիտալիստական արդիւնաբերութեան և հայ բուրժուական—աշխարհիկ դասակարգի յայտնութեան: Այս շրջանից սկսւում է աշխարհական տարրի պայքարն ընդդէմ եկեղեցական տիրապետութեան: Ս. Նազարեանցն եղաւ առաջին հայ բուրժուական տաղանդաւոր իդէօլօգն, իբրև աւետարներ այդ դասակարգի յայտնութեան, որն արդիւնաբերութեան և անտեսական կեանքի համապատասխան, պիտի ձևափոխէր նաև իր հայեացքներն և հասարակական կեանքի շրջանակը: Ս. Նազարեանցի ասպարէզը կարճատև եղաւ, սպառւած մի շարք պրօլիէտսիստ գաղափարներով, համեմաւած գերմանական մետաֆիզիք փիլիսոփայութեամբ և Կանտիզմով:

Սակայն կեանքի հետ զարգացաւ այս հոսանքն և ծնեց Գ. Արծրունի<sup>19)</sup>, առաջին տաղանդաւոր պոլիտիցիստը հայ բուրժուազիայի: Այլևս կեանքի մէջ, Գ. Արծրունին, լիբերալ ուղղութեամբ, աւելի պարզ և մատչելի, քննադատութեան ենթարկեց հայ հասարակութիւնն, իր հիմնարկութիւններով և արտայայտութիւններով, սկսելով պատմական պայքարը լուսաւորւած բուրժուազիայի ընդդէմ կրօնական տարրի, ընդդէմ ժողովրդային ստորին խաւերի ազիտութեան: Մղւեց այս կռիւը տասնեակ տարիներ, իր էութեամբ լեցնելով հայ հասարակական միտքն ու կեանքը, հարստացնելով հայ բուրժուա

<sup>18)</sup> „Հիւսիսօրիալ“ 1858—1864

<sup>19)</sup> „Մշակ“:



կան իդէօլօգիան և սուլարացնելով հայ բուրժուական ին-  
տելլիգենցիան, իր մեծ ու փոքր, պուբլիցիտա ու բեյլի-  
տրիտա ներկայացուցիչներով, որն և ճիւղաւորւեց ու  
տարածւեց ուստահայ բնակչութեան մէջ, մինչև մեր  
օրերը:

Այս էր հայ հասարակական մտքի և կեանքի լէզու  
ընթացքն և 60-ական թւականների հոսանքի էութիւնը:  
Խղճի և անհատի ինքնուրոյնութիւն, գրադիտութեան և  
ուսման անհրաժեշտութիւն, ամուսնական օրէնքների  
բարւոգումն ու ապահարգան, ընտրողական սկզբունք, հա-  
սարակական կօնորօլ, կրթւած հոգևորականութիւն, հիմ-  
նարկութիւններ և ընկերութիւններ, կապիտալի և ար-  
դիւնաբերութեան զարգացումն, ժողովրդային խաւերի  
նիւթական բարւոգումն—այս ամենն, որը կազմում է  
մինչև այժմ հայ պուբլիցիստիկայի ծուծը, հիմք ունի  
այն պատմական—տնտեսական սիստէմն և այն դասակար-  
գային սեփականական և արդիւնաբերական յարաբերու-  
թիւնները, որոնք տիրում են երկրի մէջ, այսինքն կա-  
պիտալիստական ինգուստրիան և բուրժուական տիրա-  
պետութիւնը: Այս կազմն ընդունելով իբրև բնական կարգ,  
ամեն ինչ քարոզեց նրա համապատասխան, պատմական  
—ազգայնական իդէալականացմամբ: Մրանով սպառուում  
է հայ բուրժուական իդէօլօգիների pia desideria-ն, խուլ  
և անմասն երկրի ընդհանուր տնտեսական-քաղաքական  
ընթացքին:

Յիշւած քաղաքացիական ըեֆօրմներն, անկասկած  
անհրաժեշտութիւն էին ամբողջ հասարակութեան համար,  
սակայն մինչդեռ նորածին բուրժուազիայի և նրա ինտե-  
լիգենտ իդէօլօգների ձգտումների վախճանն էր այս ամե-  
նը, առաջինները տէր լինելով արդէն իսկ տնտեսական  
կազմին և ձեռքերի մէջ ունենալով հարստութեան աղ-  
բիւրներն ու միջոցները, հասարակական միւս դասակար-

գերն էապէս ոչինչ ձեռք չէին բերում այդ ամենով,  
մնալով ստորադրւած և շահագործւած դիրքի մէջ: Նոյնը  
պիտոյ է ասել նաև գիւղական տարրի վերաբերմամբ:  
Մաքառել վաշխառութեան դէմ և կամ խօսել առատ ու  
չոր տարիների և ցանքսերի մասին, անշուշտ չէ նշանա-  
կում երկրագործական—արդիւնաբերական խնդիրը լու-  
ծել: Եւ էապէս, այն ամեն հազապիւտ և պատահական  
դէպքերին, երբ թէ Ս. Նազարեան և թէ Գ. Արծրունի  
զբաղւում էին կեանքի հրապարակ հանած այլեայլ խա-  
ւերի տնտեսական կացութեան վերաբերեալ խնդիրներով,  
նրանց ըեֆօրմատօրական պուբլիցիստիկան տալիս էր  
միայն մի շարք աննշան պալլիտատիվներ, որոնք համա-  
կերպ տիրող տնտեսական սիստէմին, կարող էին միայն  
կարկատել և կամ յետաձգել խնդիրները:

Ոչ Ս. Նազարեան և ոչ Գ. Արծրունի չեղան ար-  
տայայտիչ որևէ տնտեսական—հասարակական սիստէմի,  
դաւանանքի, որը ձգտումն ունենար, իբրև անհրաժեշ-  
տութիւն և կամ իբրև իդէալ, արմատապէս բարե-  
փոխել կեանքը: Հասարակական—տնտեսական խնդիրն իր  
էութեամբ միանգամայն հեռու էր թէ մէկից և թէ միւ-  
սից, օտար էր թէ մէկին և թէ միւսին:

Ահա այս տեսակէտից Ս. Նալբանդեանի դիրքը մի-  
անգամայն առանձնակի և բնորոշ է, դուրս մնալով  
60-ական թւականների ասպարէզից: Թէև Ս. Նազար-  
եանցի ուղղութեան և 60-ական թւականների հոսանքին  
մասնակցեց նաև Ս. Նալբանդեան, և այդ մասնակցու-  
թիւնը կապող օղակն է նրա և յիշւած հոսանքի միջև,  
բայց այդ Ս. Նալբանդեանի գործունէութեան առաջին  
շրջանն է միայն, երկրորդական իր բովանդակութեամբ,  
սկզբնական, պատահական և կողմնակի, իբրև կարճատև  
աշխատակցութիւն մի ամսազրի, որը ձեռնարկւած էր  
Ս. Նազարեանցի կողմից և կարող էր հիւրընկալել Ս.



Նալբանդեանի մի շարք քաղաքացիական կարծիքները:

Մ. Նալբանդեանի դաւանանքը կազմակերպւեց «Հիւսիսափայլ»-ին աշխատակցութեան տարիներից յետոյ, 1860—1862 թւականներին, երբ նա անցաւ Եւրոպայ և ապրեց այնտեղ, տպագրելով իր «Երկրագործութիւն»ը: Եւ նա հանդիսացաւ մտածող և քարոզիչ բոլորովին այլ ուղղութեան, ինչպէս նաև նրա գործունէութեան ասպարէզը բոլորովին ուրիշ էր և տարբեր 60-ական թւականների հայ պուրլիցիստիկայի ընթացքից:

Նրանց հակապատկեր, Մ. Նալբանդեան զբաղւեց, նախ, ժողովրդի տնտեսական խնդրով: Նրա անալիզը, որոշ չափերով, հասաւ մինչև հասարակական կազմի արմատները, նրա տնտեսական հիմքերը, որոնց մէջ և նա գտաւ «հասարակական շարիքի» պատճառները: Ապա Մ. Նալբանդեան, ունեցաւ իբրև դաւանանք, իբրև credo, հասարակական տնտեսական կազմի մի այլ սխտեմ, որը նա հակադրեց տիրող կապիտալիստական սխտեմին, և որի իրագործմամբ միայն, նրա կարծիքով, կարելի էր բարելաւել կեանքը հիմնաւորապէս և լուծել հասարակական խնդիրները: Եւ երբորդ, Մ. Նալբանդեան ձայնակից էր երկրի ընդհանուր հարցերին:

Այսպէս, 60-ական թւականներից, Ս, Նազարեանցով սկսեց, և շարունակուում է, բուրժուական—քաղաքակրթական հոսանք, հայկական կեանքի քաղաքացիական շրջանակի մէջ: Նոյն 60-ական թւականներից, Մ. Նալբանդեանով սկսում է տնտեսական—ժողովրդային հոսանք, երկրի ընդհանուր ասպարէզի վրայ: Այս հոսանքն է, արմենականներից յետոյ, շարունակուում է մինչև այժմ, իրան յատուկ փոփոխութիւններով և նորութիւններով, ի գէմս յայտնի երկու ազգային—ժողովրդային կուսակցութիւնների:

Մ. Նալբանդեան իր թէօրիական սկզբունքներով,

պատմական որոշ շրջանին, ներկայացուցիչ է ժողովրդային տնտեսական շահերի: Այդ սկզբունքները, միանգամայն բնորոշ, ունին իրանց ծագման հիմքերը, ոչ իբրև առանձնակի երևոյթ սոսկ հայկական մթնոլորդի, այլ իբրև արդիւնք որոշ ընդհանուր պայմանների, թէ Եւրոպական և թէ Ռուսաստանի հասարակական—տնտեսական կեանքի մէջ: Նախ քան «Երկրագործութեան» քննութիւնը, պարզելով այդ սկզբունքների ծագումն և էութիւնը, որոշելով նրանց տեղն ընդհանուր պատմական կեանքի մէջ, և յիշատակելով Մ. Նալբանդեանից առաջ Եւրոպական և ռուս նախորդներին, որոնց ինքնուրոյն և տաղանդաւոր հետևող էր նա, մենք բնորոշած կլինենք իրան Մ. Նալբանդեանի տնտեսական թէօրիաները:

ՄԱՆՐ ԱՐԴԻԻԿԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԹԷՕՐԻԱՆ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՁ.

Արեմտեան Եւրոպայի մէջ մինչև XV-րդ դարը տիրում էր տնային, մանր արդիւնաբերութիւնը, թէ արհեստների և թէ երկրագործութեան մէջ:

Սակայն Ամերիկայի գիւտով և Հնդկաստանի ու Աֆրիկայի շուրջ ծովային ճանապարհների բացմամբ, որոնք արդիւնք էին, մանր արդիւնաբերութեան անբաւարարութեամբ մղւած, հարստութեան ֆէօդալական որոնման, երբ բացւեցին նաև շուկաներ, աճեց պահանջն և Ամերիկայից ներմուծւեց ոսկի և արծաթ, մանր արդիւնաբերութիւնը տեղի տւեց մանուֆակտուրային արդիւնաբերութեան<sup>20)</sup> և վերջինս տիրապետեց մինչև XVIII-րդ դարի վերջերը:

<sup>20)</sup> Manufacture—ձեռագործ արդիւնաբերութեան այն ձևն է, որը յաջորդեց տնային արդիւնաբերութեան: Վաճառականական դրամագլուխը ձեռնարկող հանդիսանալով, հիմնեց, այսպէս ասած,



Այդ շրջանի քաղաքատնտեսները, միջնադարեան արտաքին վաճառականութեան և արծաթի ու ոսկու կուտակման մերկանտիլիստ<sup>21)</sup> թէօրէտիքներն, երբ դեռ չկար էապէս ապրանքային—արդիւնաբերական հարստութիւն, ոսկին ու արծաթը, որոնք առատօրէն հոսում էին կօլօնիաներից, համարեցին միակ աղբիւր հասարակական հարստութեան, պաշտպան հանդիսանալով մանուֆակտուրայի և վաճառականութեան, որովհետեւ, բացի մետաղների անմիջական հոսանքից, այդ մետաղները ներմուծւում էին երկիր նաև արտահանւած ապրանքների փոխանակութեամբ<sup>22)</sup>։

Սակայն XVIII-րդ դարից, մանուֆակտուրան սնանկացաւ քարացած, անզօր բաւարարել նորանոր շուկաներին և հսկայօրէն աճած պահանջին։ Մանուֆակտուրան իր հետ տարաւ դէպի անկումն նաև մերկանտիլիստ դրայրոցը։ Եւ այդ ֆապիսի մէջ, երբ դեռ չէր ծնւած խոշոր, մեքենայական ինդուստրիան իր ապրանքային հարստութեամբ, էկօնօմիստների հայեացքը դարձաւ դէպի հողն նախնական գործարաններն, առանց շոգեշարժ մեքենաների, որոնց մէջ գործում էին բազմաթիւ վարձկան բանւորներ և ուր տիրում էր աշխատանքի բաժանումն։ Մանուֆակտուրան միջանկեպ դրութիւն է մանր և խոշոր, կապիտալիստական արդիւնաբերութեան միջև, վերջինիս սկզբնաւորութիւնն է, կրելով նրա սաղմերը։

21) Mercantiliste (տես W. Stafford, A. Genovesi, J. Mun): Մերկանտիլիստների, ինչպէս նաև այլ քաղաքատնտեսական դրայրոցների, գրողների և հարցերի մասին մենք յիշատակում ենք այն չափով, որքան անհրաժեշտ է մեր նիւթի համար, սահմանափակւած ներկայ գրւածքի ծաւալով, առաջադրելով համառօտ միայն նիւթի հետ կապւած կէտերը։

22) Կարելի է ասել, որ քաղաքատնտեսութիւնը, որը բուրժուական էր մինչև Կ. Մարքսը, սկսւում է մերկանտիլիստ դրայրոցով։ Վերջինս իր տեսակէտով հիմք դրեց դրամային շրջանառութեան թէօրիային, շօշափելով դրան կից նաև մի շարք ուրիշ խնդիրներ։

ու երկրագործութիւնը, որոնք բնականօրէն կազմում էին աղբիւր հասարակական հարստութեան, կերակրելով ժողովրդային մեծամասնութիւնը, նստած այդ հողի վրայ, որը բերում է հողային ընենտ<sup>23)</sup>։ Յաջորդաբար հրապարակ էին եկել զրամատէր ֆերմերներ<sup>24)</sup>, որոնք ձեռնարկել էին հողի խոշոր մշակութեան, գիւղացի վարձկան բանւորներով։ Իսկ հողերի տիրապետութիւնը կենդրօնացած էր իշխանութեան ձեռքերի մէջ, ի դէմս սենեօրների և կաւաւարութեան։

Եւ անա, XVIII-րդ դարի երկրորդ կէսին երևան եկաւ ֆրանսիական էկօնօմիստների ֆիզիօկրատ<sup>25)</sup> դպրոցը, որն եղաւ ներկայացուցիչ ծնունդ առած խոշոր երկրագործութեան։ Փիզիօկրատները բացասեցին մանուֆակտուրան և վաճառականութիւնը, համարելով անպտուղ և անարտադրիչ, և անվերապահ թերեւեցին դէպի հողն ու երկրագործութիւնն, իբրև միակ աղբիւրը հասարակական հարստութեան<sup>26)</sup>, ուրեմն և տնտեսական հիմքը սօցիալական քաղաքական կեանքի նրանց թէօրիայով հողի մշակութիւնը պիտոյ է կատարել խոշոր երկրագործութեամբ, ֆերմերների ձեռքով, որոնք համարւում են իսկական երկրագործներ, վճարելով հողատէրերին հողային ընենտ։ Մանր մշակող հողատէր գիւղացիները պիտոյ է դառնան երկրագործական բանւորներ և ապրեն


23) Հողավարձ, որը ստանում է հողատէրը, վարձի տալով իր հողը կապիտալիստ երկրագործին, իբրև ձեռնարկող արդիւնաբերողի։

24) Կապիտալիստ երկրագործներ։

25) Physiocrate, առաջացած Physiocratie բառից, որը նշանակում է բնութեան տիրապետութիւն։

26) „Արդիւնաբերութիւնը նիւթին տալիս է միայն ձե... ուրեմն և նա ոչինչ չէ ստեղծում... այդ միայն ծախք է և ոչ հարստութեան ստեղծում... միայն երկրագործութիւնն է բազմացնում նիւթի և արդիւնքների... որոնք և կազմում են հարստութիւն“ — E. Pyleti, Pensieri sopra l'Agricoltura, յիշատակւած Կ. Մարքսի „Կապիտալի“ IV-րդ հատորի մէջ։

1006  
29928





իրանց աշխատանքի վարձով: Հասարակութիւնը բաժանուած է երեք դասակարգերի a) ֆերմերներ և երկրագործական բանւորներ, b) հողատէրեր, պետութեան և եկեղեցու հետ միասին և c) արդիւնաբերողներ ու վաճառականներ: Առաջին դասակարգն է միայն արտադրիչ, որովհետև նա ստեղծում է ընտա, իսկ միւս դասագորգերն անարտադրիչ են, որովհետև նրանցից երկրորդը սեփականացնում է այդ ընտան, իսկ երրորդը ներկայանում է միայն իբրև կենսական պիտոյքներ սպառող հասարակութիւն<sup>27</sup>): Փերմերներին և երկրագործական բանւորներին ֆիզիոկրատները համարում էին միաձոյլ արդիւնաբերող դասակարգ, թէև առաջինները հանդիսանում են ձեռնարկող և վարձող կապիտալիստներ, իսկ երկրորդներն—աշխատող և վարձկան բանւորներ<sup>28</sup>): Ֆիզիոկրատներն եղան էկոնոմիստներ կապիտալիստական արդիւնաբերութեան, երկրագործութեան մէջ:

Այսպէս, սկիզբն առաւ և զարգացաւ խոշոր սեփականութիւնն և արդիւնաբերութիւնը, XVI-րդ դարից ինդուստրիայի մէջ, արտայայտուած մանուֆակտուրային ձևով, իսկ XVIII-րդ դարից երկրագործութեան մէջ ֆեր-

27) Մինչդեռ մերկանտիլիստներն, իբրև ներկայացուցիչ կօրօնիական վաճառականական գրամադիտի, զբաղեցին գրամի շրջանառութեան հարցերով, ֆիզիոկրատներն, իբրև ներկայացուցիչ արդիւնաբերող կապիտալի, առաջին անգամ ձևակերպեցին հարստութիւնը — ընտան իբրև արդիւնք աշխատանքի, զձագրելով արդիւնաբերութեան նիւթերի շրջանառութիւնն երկրի մէջ,

28) Quesnay—Tableau economique, 1758, նաև de Gournay, Turgot, Paoletti և ուրիշները: Ֆիզիոկրատների կարծիքն երկրագործութեան, իբրև հասարակական հարստութեան հիմնական աղբիւրի մասին, մենք մասամբ հանդիպում ենք XVII-րդ դարի վերջին պատկանող մերկանտիլիստների մօտ, որոնք աշխատում են արդիւնաբերութիւնը հիմք դնել գրամային հարստութեան (Ch. d'Avenant—Discourses on the Publick Revenues and on the Trade of England, 1698)

մերային ձևով, իբրև առաջին քայլ յետագայի կապիտալիստական մեքենային արդիւնաբերութեան: Տնտեսական այս ընթացքը, որը պայմանաւորուած էր սեփականութեան, հողերի և արդիւնաբերութեան կենտրոնացմամբ և խոշորացմամբ, առաջացրեց տնային, մանր արհեստաւորների քայքայումն և մանր գիւղացի հողատէրերի հողագրկումն, խառնելով ու ցնցելով ամբողջ հասարակութիւնն և բաժանելով այն դասակարգերի: Շեշտեցին, մի կողմից—տիրապետութիւն և հարստութիւն, միւս կողմից ստրկութիւն և աղքատութիւն: Ժողովրդային թշուառութեան և տանջանքների նկարագրութեան նւիրուած մի ամբողջ պերճախօս և զօրեղ գրականութիւն կայ XVІІІ-րդ դարի մէջ: Եթէ մի կողմից ծնունդ էին առել կապիտալիզմն և բուրժուազիան, որոնք այն ժամանակ մանուֆակտուրային մեծութիւններ, վաճառականներ և ֆերմերներ ու հողատէրեր էին, միւս կողմից նոյնպէս ծագել էր բանւոր դասակարգը, որն իր սկզբնաւորութեան մէջ ֆէօդալական արձակուած ծառաների և թափառաշրջիկների բազմութիւն էր, յաջորդաբար իր շրջանակների մէջ առնելով մանր, քայքայուող արհեստաւորներին և մանր հողատէր գիւղացիներին:

Սկսում է պատմական պայքարը խոշոր և մանր արդիւնաբերութեան, հողատիրութեան և երկրագործութեան մէջ: Ինչպէս որ ընդհանրապէս խոշոր արդիւնաբերութեան և յատկապէս հողային խոշոր սեփականութեան ու երկրագործութեան և բուրժուազիայի ներկայացուցիչ եղան ֆիզիոկրատները, նոյնպէս և XVІІІ-րդ դարի ուսուպիստները<sup>29</sup>) հանդիսացան ներկայացուցիչ ընդհանրապէս մանր արդիւնաբերութեան և յատկապէս մանր հողային սեփականութեան ու երկրագործութեան

29) Մենք անւանում ենք նրանց ուսուպիստ (utopiste) և ոչ կոմունիստ (communiste) յետագայ էջերի մէջ բերուած բացատրութիւնների հիման վրայ:



և մանր երկրագոծ զասակակարգի, որն այդ ժամանակ կազմում էր գիւղական ժողովրդային մեծամասնութիւն, ճգնելով պահպանել քայքայումից իր պատմական—տնտեսական կազմն ու ղիրքը: Ուտօպիստները, հակադիր ֆիզիօկրասներին, եղան թէօրեախիքներ ու իդէօլօգներ գիւղական ժողովրդի:

Տեսնելով ժողովրդային կեանքի հաւասարակշռութիւնը խանգարւած, գիւղացիներին պրօլետարիզացիան, հոսանքը դէպի քաղաքներն ու գիւղերի նօսրացումն, այն աղքատութիւնն ու թշուառութիւնը, որոնք տիրեցին խոշոր երկրագործութեան զարգացմամբ, ուտօպիստները չարիք համարեցին այն, մղելով խստակի պօլեմիկայ<sup>30)</sup> ֆիզիօկրատներին դէմ: Վերջիններիս նման թեքւելով դէպի հողն ու երկրագործութիւնը, որոնք առաջին տեղն էին զբաւում XVIII-րդ դարի մէջ, ուտօպիստները քարոզեցին մանր սեփականութիւն և մանր երկրագործութիւն:

Ուտօպիստների կարծիքով, «հասարակական չարիքի» միակ պատճառը—մասնաւոր, խոշոր սեփականութիւնն է, որը ծնեցնում է ազահութիւն և անհաւասարութիւն, սարկութիւն և աղքատութիւն մի կողմն, բռնութիւն և գեղխութիւն—միւս կողմն: Բնութիւնից մարդիկ ծնւած են հաւասար ոչ թէ միայն ֆիզիքապէս, այլև իրանց պահանջներով և հասարակական դիրքով, որի հիմքը պիտոյ է լինի աշխատանք և հաւասարութիւն: Սակայն այդ հաւասարութիւնն անհնար է մասնաւոր սեփականութեան տիրապետութեան ներքոյ: Պիտոյ չէ թոյլադրել հարստութեան կուտակումն, անհրաժեշտ է ոչնչացնել այն հիմնարկութիւնները, որոնք խոշորացնում են հարստութիւնն առանց աշխատանքի, այլևայլ սպեկուլեացիաների

<sup>30)</sup> De Mably—Doutes proposés aux philosophes économistes sur l'ordre naturel et essentiel des sociétés politiques, 1768.

միջոցով: Փառանգական իրաւունքն անհրաժեշտ է սահմանափակել և ճանաչել բոլոր որդիների հաւասար բաժնի իրաւունքը: Արգելել հողերի կենտրոնացումն, խոշոր հողատիրութեան դէմ օրէնքների հրատարակութեամբ: Հողը պիտոյ է պատկանի համայնքին և ոչ մասնաւոր հողատէրերին: Տնտեսական այս հիմքերի վրայ միայն ժողովուրդը կարող է բարօրութիւն վայելել, արմատացնելով իր մէջ այլևայլ առաքինութիւններ<sup>31)</sup>:

Այս է ուտօպիստների թէօրիան: Սխալ է և թիւրիմացութեան արդիւնք այն տարածւած կարծիքն, իբրև թէ XVIII-րդ դարի յիշւած հոսանքը սօցիալիստական և կամ կօմունիստական էր, իբրև տնտեսական սիստէմ, արդի գիտական իմաստով: Այդպէս չէ, նախ այն պատճառով, որ XVIII-րդ դարը զաղափար չունէր, և կարող չէր ունենալ, սօցիալիստական սեփականութեան և արդիւնաբերութեան մասին, որովհետև վերջիններս պայմանաւորւած են շոգեշարժ մեքենաներով, խոշոր արդիւնաբերութեամբ և գործիքների համայնական սեփականութեամբ—որպիսի պայմաններ գոյութիւն չունէին XVIII-րդ դարի մէջ: Արդիւնաբերական մանր գործիքները, թէ արհեստների և թէ երկրագործութեան մէջ, չէին թոյլատրում, արդէնիսկ իրանց էութեամբ, համայնական արդիւնաբերութիւն, յատուկ լինելով միայն անհատական գործածութեան: Գոյութիւն չունէր նաև սօցիալիզմի պրօլետարիատ դասակարգը: Ուտօպիստների թէօրիայի տնտեսական կազմը հիմնւած էր մանր արդիւնաբերութեան վրայ, գլխաւորապէս երկրագործութեան մէջ, որպէս և քարոզում էին նրանք, կուելով խոշոր արդիւնաբերութեան դէմ, ապացուցանելով որ փոքր հողերն աւելի ձեռնտու են մշակւում, մինչդեռ խոշոր երկրագործութեան արդիւնքն է

<sup>31)</sup> Morelly—Code de la nature, ou le véritable esprit des lois de tous temps negligé et meconnu 1755, Meslier—Le testament 1760, de Mably—La législaton ou principes des lois, 1776.



ցանքսերի անհասութիւնն<sup>32)</sup>: Մասնաւոր սեփականութեան անւան տակ, նրանք ըմբռնումէին խոշոր, շահագործող սեփականութիւն, և ոչ մանր, պէտքերին ծառայող սեփականութիւն: Իսկ համայնական սեփականութեան տակ, նրանք ըմբռնում էին նոյն համայնքի մէջ ամէն մի անհատի մանր և հաւասար սեփականութիւնը: Ուսուցիչներին ժամանակակից տնտեսական կազմն, այսինքն մանր հողային սեփականութիւնն և արդիւնաբերութիւնն, ամփոփեած համայնքի մէջ, որտեղ իւրաքանչիւր գիւղական ընտանիք ունէր իր բաժին հողն և մշակում էր այն սեփական պիտոյքները համար, հաւասարութիւն էր պահպանում համայնքի մէջ: Եւ ուսուցիչները թէօրիան հանդէսում էր այդ կազմի վրայ, իբրև մանր սեփականատէր դասակարգի իդէօլոգիայ, ձգնելով որ այդ ժողովրդային մանր սեփականութիւնը չկլանւի բուրժուական խոշոր սեփականութեամբ: Ուսուցիչներու կողմից աւելի ծայրահեղները քարոզում էին «բարիքների համայնականութիւնն<sup>33)</sup>» բայց այդ վերաբերում էր ոչ արդիւնաբերական գործիքների համայնական տիրապետութեան և հողի մշակման համայնական ձևին, այլ արտադրութեան համայնական գործադրութեան, որն և յատուկ է մանր երկրագործութեան, եթէ խոշոր երկրագործութեամբ չէ խախտում այդ վիճակն, և եթէ ֆէօդալական սենիօրներն ու եկեղեցին չեն սեփականացնում իրանց բաժիններն ու տասանորդներն արտադրութեան, և համայնքի արտադրած բարիքը մնում է համայնքի գործադրութեան համար<sup>34)</sup>:

32) De Mably—Ibidem

33) „Communauté des biens“.

34) Ուսուցիչները էկոնօմիստ կարելի է համարել Լօքին, որը նրանցից մի դար առաջ աշխատում է հիմնաւորել մասնաւոր, մանր սեփականութիւնը: Նրա կարծիքով, թէև հողը պատկանում է ամէնքին, բայց իւրաքանչիւր մարդ սեփականատէր է ի դէմս իր անձի: Նրա մարմնի աշխատանքն և նրա ձեռքի գործն արդարացի-

Ուսուցիչները հիմք ունէին գիւղական ժողովուրդը, որն և նրանք համարում էին ազգութիւն<sup>35)</sup>: Ուսուցիչները<sup>36)</sup> իդէալն էր—հիւսիսային Ամերիկայի հնդկական ցեղերը<sup>37)</sup>, միւսները<sup>38)</sup> աչքերն ուղղեած էին դէպի հին Յունաստանը, դէպի Սպարտան, որն երբեմն կառավարում էր Լիբուրկոսի օրէնքներով<sup>39)</sup>, և կամ խորասուզեած էին քրիստոնէական առաջին դարերի մէջ<sup>40)</sup>, այդ ժամանա-

օրէն պատկանում են նրան: Մարդն իրաւունք ունի սեփականացնել այնքան, որքան նա կարող է գործադրել իր կեանքի պիտոյքների համար, նախքան առարկաների փչացումն: Հողի այն բաժինը որը մէկ մարդ կարող է հերկել, ցանկ և արտադրութիւնը գործադրել—կազմում է այդ մարդու սեփականութիւնը: Մարդն իր աշխատանքով ջոկում է այդ հողաբաժինն ընդհանրական սեփականութիւնից (I. Lock of Government)

35) „Le peuple de la campagne fait la nation“.

36) Mably—Ibidem

37) Այդ ցեղերը համայնական սեփականութիւն ճանաչում էին միայն ձկնորսութեան և որսորդութեան վայրերն ու արօտատեղիները, թէև դարձեալ իւրաքանչիւր որս—որսողի սեփականութիւնն է: Իսկ երկրագործութեան մէջ իւրաքանչիւրն ունէր իր բաժին մշակելիք հողն, իբրև սեփականութիւն, առանց ուրիշին փոխանցման իրաւունքի (Cook—Histoire universelle des voyages XV.) Այդ ցեղերի տնտեսական կազմն էր մանր հողատիրութիւն և երկրագործութիւն:

38) Mably—Ibidem.

39) Լիբուրկոսի ժամանակակից, այսինքն IX-րդ դարի ք. ա. Սպարտայի տնտեսական-հասարակական կազմը նոյնպէս հիմնուած էր մանր հողային սեփականութեան և երկրագործութեան վրայ: Հողը հաւասար բաժանուած էր ընտանիքների մէջ, և իւրաքանչիւր բաժին կազմում էր մշտնջենական ժառանգական սեփականութիւն իւրաքանչիւր ընտանիքի, առանց վաճառման իրաւունքի: Սակայն, այս մանր հողատիրութեան կից, գոյութիւն ունէր խոշոր հողային սեփականութիւն ազնւական տոհմերի: Իսկ V-րդ դարից ք. ա. սկսեց մանր սեփականութեան քայքայումն և հողերի կենդրոնացումն (Plutarque—Lycurgue: Aristote—La politique).

40) Ուր տիրում էր նոյնպէս մանր հողային սեփականութիւն և երկրագործութիւն: Այդ մասին, ի միջի այլոց, հետաքրքիր է



կի գիւղական-նահապետական կենցաղը համարելով լաւագոյն կազմ. Այս ամէնը բնորոշ շրջաններ են, երբ դեռ խոշոր արդիւնաբերութեամբ չէ խախտւած ժողովրդային մանր տնտեսութիւնը:

Այսպէս, XVIII-րդ դարը, բեղմնաւոր ներքին տնտեսական կազմի փոփոխութեան պրօցէսով, արտադրեց միմեանց հակադիր երկու հոսանքներ: Մինչդեռ Ֆիզիօկրատներն, իբրև էկօնօմիստներ և բուրժուազիայի ներկայացուցիչներ, մեկնման կէտ ունէին իրերի ընթացքն և երկրագործութեան զարգացումն, ուսուպիստների յենարանն էր տիրած տնտեսական կազմը, նպատակ ունենալով գիւղական ժողովրդային բարօրութիւնը: Մանր սեփականութեան կաղապարի մէջ նրանք ձուլեցին իրանց հաւասարութեան ազատութեան և համերաշխութեան զգացմունքներն ու սկզբունքները, կազմելով մանր արդիւնաբերող դասակարգային-ժողովրդային մի ամբողջ հոսանք, որի մէջ արտայայտւեց նրանց համակրանքն ու կարեկցութիւնը դէպի այդ ժողովուրդը:

Սոչոր արդիւնաբերութեան զարգացման ընթացքը շարունակուում էր: Տասն և ութերորդ դարի վերջից, շոգեշարժ մեքենաների գիւտով, այդ գորգացումն ստացաւ ուժգնակի և հսկայական կերպարանք, ծնւեց ներկայի գործարանն<sup>41)</sup> և առաջ եկաւ կապիտալիստական ապրանքային կառուսկու յօղւածը, որի ոռւտերէն թարգմանութիւնը պատահմամբ մեր ձեռքն ընկաւ (Католическая церковь и социалдемократія): Նոյն բրօշիւրի մէջ, նոյնպէս պատահաբար և ներկայ էջերի գրութիւնից յետոյ, մենք հանդիպեցինք այն կարծիքին, որ արտայայտել ենք նախորդ էջերի մէջ, այսինքն, հին կոմմունիզմի էութիւնը կայանում է արդիւնքների բաշխման, և ո՛չ արդիւնաբերական գործիքների հասարականացման մէջ:

<sup>41)</sup> Fabrica—յատուկ շինութիւն, ուր գործում են բանւորներն և ուր կատարում է կապիտալիստական արդիւնաբերութիւնը. շոգեշարժ մեքենաներով և աշխատանքի մանրակրկիտ բաժանմամբ:

արդիւնաբերութիւնը, թէ ինդուստրիայի և թէ երկրագործութեան մէջ: Հասարակական այլեայլ խաւերի տընտեսական ցնցումն և դասակարգերի բաժանումն այլևս պատմական անխուսափելի իրողութիւններ էին: Անցած XIX-րդ դարի կէսից կազմակերպւեց նաև բանւոր դասակարգը: Սոչոր և մանր սեփականատէրեր ու արդիւնաբերողներ և վարձկան պրօլետարիատ, մշանջենական պայքարի մէջ—այս էր հասարակութեան պատկերն արդի կապիտալիզմի ծագման առաջին շրջանից: Այս բոլոր դասակարգերն ևս ունեցան իրանց իդէօլօգիան, իրանց ուղղութիւնը, որոնք և արտայայտւեցին այլեայլ ներկայացուցիչների միջոցով: Եւ միայն XIX-րդ դարի երկրորդ կէսից վերջնականապէս գերակշռող հանդիսացան երկու դասակարգ, իրանց տնտեսական—քաղաքական թէօրիաներով, այսինքն խոշոր բուրժուազիան և պրօլետարիատը:

Մինչև այդ, XIX-րդ դարի կէսերին ծագած հոսանքներից ամենագորաւորն եղան Յուլիէրիզմ և Պրուդօնիզմ, որոնք շարունակութիւն և կրկնութիւն էին XVIII-րդ դարի մեր առաջադրած Ֆիզիօկրատների և ուսուպիստների:

Ֆիզիօկրատների թէօրիան իր կրկնութիւնը գտաւ Յուլիէրի և նրա շիօլայի մէջ, որոնց նպատակն էր խոշոր սեփականութեան հիմքերի վրայ կառուցանել իրանց բռնազբօսիկ ֆալանստերները<sup>42)</sup>, ուր պիտի ծաղկէր խոշոր երկրագործութիւնը, կաղապարւած երկրագործական ասօցիացիաների մէջ<sup>43)</sup>: Կապիտալի կողմնակից, Յուլիէրիէն կենտրոնացրեց այդ կապիտալն երկրագործութեան մէջ, աննշան տեղ տալով ինդուստրիային: Մինչդեռ Ֆի-

<sup>42)</sup> Phalanstère  
<sup>43)</sup> Ch. Fourier—Traité de l'association domestique et agricole, 1822, Le nouveau monde industriel et societaire, 1829



զիօկրատները թէօրիան հետևանք էր իրերը դրուծեան և ուսումնասիրութեան, Ֆուրիէի թէօրիան, ինդուստրիայի ծաղկման շրջանին, եղաւ վերագարձ դէպի երկրագործութիւնն և ուսուպիա, որով նա ձգտում էր հասարակական կեանքը բարւոքել, կանխակալ և անհիմն թւերով, քննադատելով չարիքներն ինդուստրիայի, խուսափելով նրանից և բանակուելով ինդուստրիայի դմի ներկայացուցիչ Սեն-Սիմօնի և նրա շիօլայի հետ, որոնք մերժեցին Ֆուրիէի սխտէմը<sup>44</sup>): Ֆուրիէն զանց էր անում, որ իր փայտայած խոշոր երկրագործութեան «չարիքները» XVIII-րդ դարի մէջ քննադատել էին ուսուպիսաները:

Իսկ XVIII-րդ դարի ֆրանսիական ուսուպիսաների թէօրիան վերարդատուեց Պրուզօնի միջոցով: Մինչդեռ Ֆուրիէն, կողմնակից խոշոր արդիւնաբերութեան, չարիքի էութիւնը գտաւ այդ արդիւնաբերութեան անկազմակերպ և անհամերաշխ ձևի մէջ, Պրուզօն, ներկայացուցիչ մանր արդիւնաբերութեան, չարիքը տեսաւ հէնց նոյն խոշոր արդիւնաբերութեան և սեփականութեան մէջ: Պրուզօնը որչափ հակառակորդ էր կապիտալին, որն և նա անւանում է իսկապէս սեփականութիւն, ամեն կերպ ապացուցանելով վերջինիս անհիմն և վրասակարգոյութիւնը, բաց թողած իր յայտնի աֆօրիզմը — «սեփականութիւնը գոյութիւն է<sup>45</sup>)», նոյնչափ նա հակառա-

կորդ էր իր ժամանակակից կօմունիզմին, նոյն ուժգնութեամբ և մինչ իսկ հայհոյանքներով բանակուելով Գաբէյի<sup>46</sup>) դէմ: Սոշոր-մասնաւոր և հասարակական սեփականութեան, այս երկու հակադիր բեւեռների, հաշտութիւնն և անսեռական կեանքի բարւոքումն Պրուզօն գտաւ մանր-անհատական սեփականութեան և արդիւնաբերութեան մէջ, առաջադրելով փոխադարձ օգնութեան՝ զանձարաններ, անհատական կրեդիտ, ժողովրդային բանկ, արդիւնաբերող և գործադրող կօօպերացիաներ, մի խօսքով իր միւտիւալիզմի թէօրիան, ձուլելով բուրժուազիան և պրօլետարիատը մանր արդիւնաբերող դասակարգի մէջ<sup>47</sup>):

Որպէս ֆիզիօկրատների և Ֆուրիէի, նոյնպէս ուսուպիսաների և Պրուզօնի համեմատութեան մէջ, մինչդեռ ուսուպիսաների թէօրիան հիմնւած էր ժամանակակից մանր արդիւնաբերութեան և ժողովրդային մեծամասնութեան շահերի վրայ, նրանցից համարեա մի դար յետոյ, երբ զարգացել էին կապիտալիզմն ու պրօլետարիատն և նոյնը 1789-ին, որից կէս դար յետոյ Պրուզօն համարեա բառացի երկնեց այն

46) Cabet—Credo communiste 1840, Voyage en Icarie 1840.

47) Proudhon—Q'uest ce que la propriété 1840; Systèmes des contradictions économiques ou philosophiques de la misère 1846 և այլն. Պրուզօն հակասութիւնների աղբիւր էր, չնոչհիւ իր անսխտէմ ինքնուսութեան և տեմպերամենտի և իր կրած ազդեցութեան ուրիշ հոսանքներից, մանաւանդ հանդէպ այն հարցերի ու կարիքների, որոնց առաջադրում էր անսեռական կեանքն և որոնց լուծումն չէր ամիօփուում իր մանր արդիւնաբերութեան թէօրիայի մէջ: Նաև, մինչդեռ XVIII-րդ դարի ուսուպիսաների հոգածութեան օրեկար մանր արդիւնաբերող ժողովուրդն էր, XIX-րդ դարի կէսին Պրուզօնի հոգածութեան օրեկար դարձաւ նաև բանւոր դասակարգը, որն արդէն հասարակական նշանակութիւն էր ստացել, և որի էական միասիայի դէմ կուում էր Պրուզօն: Մանր երկրագործութեան թէօրիայի մէջ նա կրեց էկօնօմիսա Սիմօնդի ազդեցութիւնը: (Sismondi—Nouveaux principes 1827)

44) Ch. Fourier—Pièges et charlatanisme des sectes. S. Simon et Owen: Վերջինս, այսինքն Օուէն, նոյն ուսուպիսան էր, Ֆուրիէին համարեա ժամանակակից, միայն ինդուստրիայի մէջ, կազմելով իր յայտնի գործարանական ընկերութիւնը: Թէ մէկի և թէ միւսի թէօրիայով և իրականապէս հիմնւած կօլօնիաների մէջ (անաջող փախձանով) գոյութիւն ունէին կապիտալիսաներ:

45) La propriété—c'est le vol. Պրուզօնից մի դար առաջ, քաղաքական գեմօկրատիզմի նախահայր Ռուսսօն յայտնեց այս կարծիքը 1754-ին, իսկ Բրիսսօն, միլիտարիսաների ղեկավարն արտադրեց



ժողովրդային մասսան ենթարկել էր դիֆֆերենցիացիայի, այդ շրջանին Պրուդոնիզմը նոյնպէս նահանջ էր դէպի յետ, և միևնոյն ժամանակ յուսահատ ու կատաղի ադմոնիչ ու տագնապն էր մանր արդիւնաբերութեան, որը մահւան ճիրանների մէջ գոյութեան կռիւ էր մղում: Ուսուցիչատների պատմական դէմօկրատիզմն այլասեռւած, իբրև անախրօսիզմ, Պրուդոնի վէջ վերարտադրւեց մանր — բուրժուական անարխիզմով:

Պրուդոնիզմն առաջացրեց զօրեղ հոսանք, իր բանակի մէջ առնելով, նախ, մանր սեփականատէր դասակարգն ու այլևայլ ինտելլիգենտ խաւեր, և ապա բանւորային խմբեր, որոնք դեռ չէին ըմբռնել տնտեսական էվօլյուցիայի ընթացքն և իրանց պատմական կոչումն, և միւս կողմից, նոր յաղթահարւած<sup>48)</sup>, խորասուզել էին իրանց մանր տնտեսական բարենորոգումների մէջ, կապիտալիզմի ծաղկման այդ շրջանին: Միայն 60-ական թւականներից յետոյ, երբ ենթարկւեց գիտական քննութեան կապիտալիստական տնտեսական-հասարակական կազմն և կառուցւեց գիտական սօցիալիզմի շէնքը, Պրուդոնիզմը քայքայւեց և հրապարակ եկաւ սօցիալիզմի թէօրիան:

**ՄԱՆՐ ԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹ. ԹԷՕՐԻԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԷՉ**

Մինչև XIX-րդ դարի առաջին կէսը, կապիտալիստական մեքենային խոշոր ինդուստրիան Ռուսաստանի մէջ կազմում էր դեռևս մասնակի երևոյթ: Երկրի տնտեսական կազմը գլխաւորապէս հանգչում էր մանր և մանուֆակտուրային արդիւնաբերութեան վրայ: Շնորհիւ այն

<sup>48)</sup> Յուլիս 1848.

բանի, որ մանուֆակտուրան կատարում էր ձեռքի գործիքներով, և միւս կողմից, ճորտային բեժիմի ներքոյ, ազատ բանւորների բացակայութեան պատճառով, մանուֆակտուրային գործարանների պատւէրներն ու աշխատանքները բաժանւում էին գիւղական ընտանիքների մէջ, որով և մանուֆակտուրային գործարաններին կից առաջացաւ և բազմացաւ ինքնագլուխ կուստարային արդիւնաբերութիւնը<sup>49)</sup>, որպիսի ցանցով պատւեց երկիրն և որը ծաղկեց մինչև շոգեշարժ մեքենաների տիրապետութիւնը: Քաղաքների մէջ տիրում էին մանր արհեստները: Երկրագործութիւնը նոյնպէս մանր էր, բաժան հողերի վրայ ընտանիքային տիրապետութեամբ և մշակմամբ: Իսկ ինչ վերաբերում է հողատիրութեան, եթէ հողերի  $\frac{1}{3}$  մասն կազմում էր գիւղական-համայնական սեփականութիւն, միւս  $\frac{2}{3}$  մասն սեփականութիւն էր պետութեան, եկեղեցու և մասնաւոր անհատների և ընկերութիւնների<sup>50)</sup>:

Սակայն շոգեշարժ մեքենաների տարածմամբ, Ռուսաստանի մէջ զարգացաւ խոշոր ինդուստրիան: Ճորտերի ազատումն տեղի ունեցաւ 1861-ին, մատակարարելով կենտրոններին բանող բազուկներ: Շոգեշարժ մեքենաները մասն նաև երկրագործութեան մէջ: Սաստկացաւ տնտեսական պայքարը մանր և խոշոր երկրագործութեան, ինչպէս նաև գործարանական-մեքենային և կուստարական

<sup>49)</sup> Кустарная промышленность—Kunst և Kunstler բառերից, այսինքն արհեստ և արհեստաւոր: Գիւղական ընտանիքների ձեռքով արտադրւում էին թէ երկրագործական և թէ ինդուստրիական առարկաներ և ապրանքներ, որպէս սեփական գործածութեան, նոյնպէս և վաճառքի համար, գլխաւորապէս առևտրականների միջնորդութեամբ, որոնք տալիս էին պատւէրներ: Կուստարային արդիւնաբերութեան մասին տես հիմնական տեղեկութիւններ—Туганъ-Барановскій—Русская фабрика, 1900 երկր. հրատ.

<sup>50)</sup> Տիմիրեազեվ, Տենկօբօրսկից, Տուգան — Բարանօվսկից, ՖօրտուՆատօֆ և պաշտօնական տեղեկութիւններ:



արդիւնաբերութեան միջև, շարժելով ժողովրդային հիմքերն և տալով մեզ ծանօթ Եւրոպայի պատկերը:

Նոյնն եղաւ, անկասկած, նաև Ռուսաստանի մէջ, այլևայլ դասակարգերի և նրանց ներկայացուցիչները դիրքը դէպի երկրի անտեսական ձևափոխութիւնը: Մինչդեռ բուրժուայ էկոնօմիստները կողմնակից էին խոշոր սեփականութեան և ինդուստրիայի, գիւղական ժողովրդային մասսայի իդէօլօգները համարում էին այն շարիք և բացասական երևոյթ, որից անհրաժեշտ էր խուսափել, քարոզելով պահել երկիրը մանր արդիւնաբերութեան կազմի մէջ:

Յիսունական թւականների այդ ուսու ստապիստների<sup>51)</sup> թէօրիան կնքւած էր ամբողջովին Պրուդօնիզմի դրօշմով, սնւած Լուի-Բլանի և Սա. Միլլի միքանի սկզբունքներով, և այս ամէնը փոխադրւած ազգային ցեղական հողի վրայ սլավեանօֆիլների, որոնց ձախ, դէմօկրատ թեր կազմեցին նրանք էապէս<sup>52)</sup>, բանակուելով ժամանակակից ինդուստրիալիստ և բուրժուայ էկոնօմիստների դէմ<sup>53)</sup>:

Հերցէն հիասթափւած «փտած արևմուտքով», ուր թշուա էր պրօլետարիատի վիճակն, իսկ վերջինիս յաղ-

<sup>51)</sup> Հերցեն, Չերնիշևսկի և նրանց հետևորդները „Современник“ ամսագրի շուրջ:

<sup>52)</sup> Գեռ XIX դ. սկզբներից, հողային ազնւականութեան թէօրեաթիքները բացասում էին խոշոր ինդուստրիան, առաջնակարգ տեղ տալով երկրագործութեան, ճորտային յեժիմի ներքոյ և պաշտպանելով անային-կուստարական արդիւնաբերութիւնը (Շտօրիս, Եակօր և նրանց օրգան «Духъ журналовъ» 1815—1820): Այս հիմքերի վրայ կազմւեց սլավեանօֆիլ հոսանքը, որը նոյնն էր քարոզում, ճանաչելով միաժամանակ ինդուստրիայի և գործարանների անհրաժեշտութիւնը քաղաքների մէջ, միայն նահապետական հիմքերի վրայ: (Կիրէեւ, նրանց օրգան „Москвитянинъ“ 1841—1845 թ.)

<sup>53)</sup> Чернышевский т. III, բնագէմ „Экономическій указатель“ ամսագրի:

թանակը, նրա կարծիքով, տանում էր դէպի քաղաքակրթութեան անկուսման, ընդդէմ էր կապիտալիզմին, հակառակ նաև ժամանակակից սօցիալիզմին, քարոզելով մանր արդիւնաբերութիւն և ուսուսական օբձչինաների տիրապետութիւնը, համարելով այդ, միւս կողմից, սօցիալիզմ, և գտնելով միակ փրկութիւնն այդ համայնքների մէջ, որոնց միջոցով Ռուսաստանը կարող էր խուսափել, նրա կարծիքով, կապիտալիզմից և նրա առաջացրած շարիքներից: Այս հանգամանքը փրկութիւն էր նաև տակալիկայի տեսակէտից, որովհետև գոյութիւն ունեցող լէգալ օբձչինաներն իդէալ ընդունած, Հերցէն ստեղծում էր գործունէութեան դիւրին ճանապարհ<sup>54)</sup>:

Այս թէօրիայի պուրլիցիստան եթէ Հերցէնն էր, նրա ամենազաղանաւոր էկոնօմիստն ու թէօրեաթիքն եղաւ Չերնիշևսկի, որը տարիների ընթացքի մէջ, մի շարք յօդւածներով և ստատիստիկայով, տքնում էր ապացուցանել նրա ճշտութիւնը<sup>55)</sup>:

Նախ, Չերնիշևսկի պաշտպան էր անային-կուստարական արդիւնաբերութեան<sup>56)</sup> առաջնակարգ տեղ տալով

<sup>54)</sup> Herzen—Le peuple russe et le socialisme, 1850: Von anderm Ufer 1850; Колоколь 1857—1867. „Պահպանել օպչինան, տալ անհատին ազատութիւն, պահպանել ժողովրդային միութիւնն—անախն բանի մէջ է կայանում Ռուսաստանի ազազայի հարցը, այսինքն նոյն սօցիալական անտիմօրիայի հարցը, որի լուծումն զբաղեցնում է և յուզում արևմուտքի մտքերը“ (Старый миръ и Россія): Նրա կարծիքով, պրօլետստի Գերմանական ֆաղիսին, ընդդէմ պառաւ Եւրօպայի, պիտի յաջորդի սլավօնական թարմ և ուժեղ ֆաղիսն իր օբձչինայով և ֆեաերալիզմով: Այս խեղաթիւր ըմբռնումն „սօցիալական անտիմօրիայի“ և այս սլավեանօֆիլ կարծիքները, Բակունին, իբրև ազիտատօր, աշխատում էր գործադրել իրականութեան մէջ: Ժողովրդի և օպչինանների մասին նա կրկնում է նոյնն իր „Государственностъ и анархія“ գրքի մէջ:

<sup>55)</sup> Чернышевский т. III (1857 „Современник“) т. IV (1858—1859 „Соврем.“).

<sup>56)</sup> Ibid., կրկնում է այդ ժաւրափառ շրթունքներով:



ժողովրդային երկրագործութեան: Ի նկատի առնելով, և այդ իբրև աղետաբեր չարիք, որ Ռուսաստանն ևս մտնում է խոշոր սեփականութեան և կապիտալիզմի ֆազիսը, որով ոչնչանում է մանր սեփականութիւնը, և տեսնելով կապիտալիզմի առաջացրած թշուառութիւնն Եւրոպայի մէջ, բանւոր դասակարգի բազմացմամբ, Չերնիշեվսկիյ կարծում է թէ Ռուսաստանը կարող է ընթանալ բոլորովին ուրիշ ճանապարհով, շնորհիւ իր օբշչինաների և նրանց մէջ տիրած հողերի համայնական տիրապետութեան սկզբունքի, որը կարելի է բարեփոխել հողերի երկարատև և ոչ տարեկան բաժանմամբ ընտանիքների միջև<sup>57</sup>): Ռուսական օբշչինաները կ'հանդիսանան պատենէշ ընդդէմ խոշոր սեփականութեան և կապիտալի, իրանց շրջանակի մէջ պահպանելով իրանց յատուկ համայնական կազմը, որը գերագոյն ձևն է և ցանկալի վիճակն, և որից զրկւած է Եւրոպան, որովհետև խոշոր սեփականութեան և կապիտալիզմի զարգացմամբ ոչնչացան Եւրոպայի համայնական կարգերը: Այս կերպ Ռուսաստանը կ'սուսափի կապիտալիզմի ստադիայից և ռուս ժողովուրդը կ'ազատւի պրօլետարիատի վիճակից: Ռուսաստանն, ի դէմս օբշչինաների, ունի արդէն այն փրկիչ հիմնարկութիւնը, որի իրագործումն Եւրոպան համարում է թշուառութեան վերացումն: Եւ մինչդեռ Եւրոպայի մէջ նոր ծագած իդէան<sup>58</sup>) այնտեղ մնում է ուսուպիա,

<sup>57</sup>) Չերնիշեվսկիյ հակասում է իրան, թոյլ տալով շոգեշարժ մեքենաների գործադրութիւնը, որոնք հէնց իր համոզմամբ, Հակաստ-հաուզէնի, Տենկօբօրսկու և Ստրուկովի կարծիքի համեմատ, անգործադրելի էին օբշչինաների մէջ, ուր ամէն ընտանիք մշակում է իր բաժին հողն անհատական գործիքներով:

<sup>58</sup>) „Союзное пользование и производство между людьми“. Չերնիշեվսկու կարծիքով, այս էր „իդէայի“ վերջին խօսքն, առանց գաղափար ունենալու Մարքսի և Էնգելսի արդէն տպւած (1857) մի քանի աշխատութիւնների մասին: Այդ „իդէան“ խմբումն է Պրոլետնի մուտիւալիզմի, Լուի Բլանի „աշխատանքի կազմակերպութեան“ և Ս: Միլլի „սեփականութեան բարելաւման“, յղող-

դժարագոյն արգելքները հանդիպելով, այդ նոր իդէան հնուց գոյութիւն ունի ռուսական գիւղական կենցաղի մէջ, իբրև իրական կարգ, որն անհրաժեշտ է միայն պահպանել և զօրեղացնել: Իւրաքանչիւր երկրագործ պիտոյ է լինի հողատէր: Սեփականատէրը, տէրն ու բանւորը, պիտի միացած լինեն մէկ անձնաւորութեան մէջ, ուստի և ամենայարմար ձևն է—պետական սեփականութիւն, համայնական տիրապետութեամբ<sup>59</sup>): Անհրաժեշտ է հողերի վերագնումն պօմէշչիկներից, պետութեան միջոցով, յօգուտ գիւղացիների:

Ռուսական օբշչինաների կազմը—մանր սեփականութիւնն և մանր երկրագործութիւնն էր<sup>60</sup>), և Չերնիշեվսկու ֆուրիէրիզմով: Այս ուսուպիական արդիւնաբերա-երկրագործական ակցիօներական ուրւագծի մէջ տեղ ունին կապիտալ և վարձուոր աշխատանք, ինդուստրիալ ու գործարան, և հողային սեփականութիւն:

<sup>59</sup>) Ռուսական օբշչինաների, իբրև փրկութեան կայանի, իդէալացման զրդիչը, թէ Հերցէնի և թէ Չերնիշեվսկու համար, եզու գերմանացի ճանապարհորդ Հակաստաուզէնի օբշչինական գիւտը (Haxthausen—Studien über die innern Zustände das Volksleben und insbesondere die ländlichen Einrichtungen Russlands, 1847): Նկարագրելով Ռուսաստանի գիւղական կենցաղն և օբշչինաներ (այսինքն մանր հողատիրութիւն) գտնելով, նա եզրակացնում է թէ, մինչդեռ արևմուտքը տանջւում է պրօլետարիատի պաուպերիզմով, որի բուժումն անլուծելի է մնացել, Ռուսաստանը չփութ այդ հիւանդութիւնը, որից նա պահպանւում է իր օբշչինայական կազմով, և առաջարկում է բարելաւել օբշչինաները հողերի երկարատև բաժանմամբ, և այնն էապէս, իր բոլոր կարծիքներով Չերնիշեվսկիյ կրկնութիւն է Հակաստաուզէնի: Նա կողմնակից է նաև սլաւեա-նօֆիլներին, որոնց անհամեմատ բարձր է դասում „գապաղնիկներից“, զլխաւորապէս առաջինների օբշչինայական կարծիքների համար: Այս հարցի մասին կայ Մարքսի և Էնգելսի կարծիքը, որը մենք այժմ անկարող ենք յիշատակել:

<sup>60</sup>) Օբշչինաների մէջ իւրաքանչիւր գիւղացի ունի իր կտոր մշակելիք հողն, իբրև սեփականութիւն, և միայն անտառներն, արօտատեղիներն և որսի վայրերն անբաժան են և ընդհանուր սեփա-



շեփակին բռնելով պահպանողական զիրք երկրի պատմական ընթացքի հանդէպ, քարոզում է խափանել կապիտալիզմի մուտքը, պատնէշ հանելով օբըշինաները նաև ընդդէմ սօցիալիզմի, և ներկայանում է իբրև արա-յայտիչ ուսուսական բաղամտիւթիօն մանր սեփականատէր ժողովրդային դասակարգի:

Հերցէնի և Չերնիշեփու այս ուղղութիւնն ունեցաւ իր բաղամտիւ հետևողները: Նոյն թւականներին Սերնո-Սօլօվիօվիչ քարոզում էր թէ իւրաքանչիւր զիւղացի պիտոյ է ունենայ իր բաժին հողը, բոլոր զիւղացիները պիտոյ է դառնան ազատ հողատէրեր, իսկ ամբողջ հողը պիտոյ է լինի ժողովրդային սեփականութիւն<sup>61</sup>): Ճորտերի ազատումից յետոյ, երբ կտրւեց այն կապը, որը կար առաջ զիւղացիների և հողի միջև, և միւս կողմից, կենտրոնների մէջ առաջացաւ ինքուստրիական բանւոր դասակարգը, մանր արդիւնաբերող դասակարգի գոյութեան կանութիւն (Հակասատւզէն): Մինչև անգամ Ուրալի կողակների օբըշինաների մէջ, ուր ընդհանուր հողը բաժանւած չէ մասերի, հունձի ժամանակ, իւրաքանչիւր անհատ, նախ տենդօրէն սահմանաւորում է իր բաժին ցանքան և ապա հանգիստ սկսում է հնձել (նոյն): Օբըշինան ոչ թէ արդիւնաբերական գործիքների և արդիւնքի սօցիալիզացումն է, իբրև անտեսական կազմ, այլ սոսկ հասարակական մի կատէգորիա, ընտանիքների և կլանների համայնք, որի անտեսական կազմն է—մանր սեփականական կազկանդւած հաւասարութիւն, համայնական կենցաղի միջև: „Բոլոր նախնական ցեղերի մէջ հողն ընդհանուրի սեփականութիւն է և ենթարկւում է պարբերական բաժանման ընտանիքների մէջ“ (Laveleye—De la propriété et de ses formes primitives, 1874: Տես նաև Letourneou—La sociologie): Համայնական հողատիրութիւնը ոչ թէ բացառիկ երևոյթ էր Ռուսաստանի մէջ, այլ մանր սեփականութեան սիստէմ էր Եւրոպայի մէջ, մինչև կապիտալիզմի զարգացումն: Այդ օբըշինաների (Village community, Mark, Commune) նկարագրութեան հարուստ Եւրոպական գրականութիւն կայ:

<sup>61</sup>) Окончателъное рѣшеніе крестьянскаго вопроса, Берлинъ 1861.

հարցը սուր կերպարանք առաւ: Եւ անա, <sup>62</sup>) 60-ական թւականներից կազմւեցին առաջին ուսուսական յայտնի կուսակցութիւններն և յաջորդեց գործունէութեան ամբողջ մի շրջան, յիշւած ուղղութեամբ, որն ուրիշ բան չէր, բայց եթէ մանր սեփականատէր ժողովրդային դասասարգի էպօխայ<sup>62</sup>):

<sup>62</sup>) Народники, народовольцы, социалисты-революционеры. Լև Տօլստոյ նոյնպէս, ջանալով լուծել անտեսական խնդիրներ, հետևեց նոյն ուղղութեան: Նա պարսաւեց կապիտալիզմն և բանւոր դասակարգը, քարոզելով վերադառնալ դէպի նախկին զիւղն ու մանր երկրագործութիւնը (սուսերէն բրօշիւրներն և „L'esclavage moderne“ Լ. Տօլստոյի անտեսական թէօրիայի մասին տես մեր յօդւածները „Экономическіе взгляды Л. Толстого, 1910 гав. „Баку“ №№ 166, 168) Տօլստոյ ջատագովում է ամերիկացի գրող ժորժին (George—Progress and poverty 1879), սակայն անկասկած թիւրիմացութեամբ: Թէև ժորժն ընդունում է իբրև պատմական իրողութիւն, որ անցեալի մէջ հողն ընդհանուրի սեփականութիւն էր և ամէն մի ընտանիք ունէր իր բաժին հողը, սակայն ներկայի վերաբերմամբ, ժորժը քարոզում է, լի հակասութիւններով, վերացնել բոլոր հարկերը, որոնք ծանրանում են ձեռնարկող դասակարգի վրայ, և նշանակել միայն հողային հարկ, հողատէր դասակարգի վրայ, և այդ հարկի միջոցով առնել նրանից հողային բննտան: Հողատէրերից առնելով բննտան, պետութիւնն էպէս կ'ոչնչացնի խոշոր հողային սեփականութիւնը, յայտարարելով հողը պետական սեփականութիւն և առլով վարձի նրանց, որոնք աւելի մեծ գին կ'վճարեն: Այս գիւտը կրկնութիւն է Ժ. Ս. Միլլի (Principes of Political Economy 1848) և Սպենսերի (Social statics, 1848): Ժորժը պաշտպան էր կապիտալի և երկրագործական խոշոր արդիւնաբերող դասակարգի, ընդդէմ հողատէրերի, որոնք, նրա կարծիքով, ճրիարար ստանում են հողային բննտան: Նրա միասիօնեական ոճով այս ճապաղ պանայէան ուրիշ բան չէ, բայց եթէ սրշաւանք ընդդէմ հողատէր դասակարգի, վերջինիս պայքարի մէջ կապիտալիստ արդիւնաբերող դասակարգի դէմ:



Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԷՕՐԻԱՆ

Այսպէս, անխտիր ամեն տեղ, Եւրոպայի թէ Ռուսաստանի մէջ, մանր հողային սեփականութեան և մանր երկրագործութեան թէօրիան, իբրև անտեսական լաւագոյն կազմ, ունեցաւ իր թէօրեալքներն և իր գրականութիւնն, երկրի անտեսական-հասարակական զարգացման որոշ ֆազիսին, լինելով արտայայտութիւն և սլայքար մանր սեփականատէր երկրագործ դասակարգի: Նոյնն եղաւ հայկական կեանքի վերաբերմամբ: Որպէս XVIII դարի ուտօպիստներն ու Պրուդօն, որպէս Հերցէն և Չերնիշեվսկի, նոյնպէս և Մ. Նալբանդեան, նոյն անտեսական թէօրիայի և նոյն դասակարգի արտայայտիչ և քարոզիչ եղաւ հայ հասարակութեան մէջ: Ապրելով Մօսկւայ և Պետերբուրգ, Մ. Նալբանդեան արդէն ծանօթ էր Չերնիշեվսկու ուղղութեան հետ, անցնելով արտասահման, նա նոյնը գտաւ Հերցէնի, Բակունինի և Սերնօ-Սօլօվեօվիչի մէջ, իսկ Փարիզ նա տարւեց Պրուդօնիցմով, որը տիրող էր 60-ական թւականներին:

Մ. Նալբանդեանի թէօրիայի պատւանդանը— „անտեսակամ“, կամ “հացի խնդիրն“ է<sup>63</sup>), այսինքն ժողովրդի

<sup>63</sup>) Ոչ անտեսական մատերիալիզմ, պատմական մատերիալիզմ (ըստ մեզ անտեսական մօնիզմ) կոչւած աշխարհահայեացքը, որը պատմական-հասարակական էվօլյուցիայի փիլիսոփայական սիստէմ է, հակադիր ըստ մեր տերմինօլոգիայի, իդէալիստական մօնիզմին և կամ թէօլօգիական տուալիզմին: Որ հասարակական շարժումների պատճառները անտեսական, կամ աւելի ճիշտ ասած, նիւթական են, միայն այս նեղ և մետաֆիզիք սահմանների մէջ, զուրկ դասակարգային և պատմական պրօցէսսի իմաստից, նաև արգիւնաբերական սիստեմների փոփոխութիւններից, Մ. Նալբանդեան յայտնում է իր պատմական մատերիալիզմն, օրինակ բերելով իրան ժամանակակից պատերազմը միացեալ նահանգների հիւսիսային և հարաւային շտատների միջև, յանուն ստրուկների ազատութեան:

գոյութան և բարեկեցութեան խնդիրը, որն և առաջինն է, ըստ Մ. Նալբանդեանի: Սակայն, անտեսական խնդիրը չէ կայանում այլևայլ բարենորոգութիւնների, և կամ շարժնային ձևով ըմբռնւած, արդիւնաբերութեան և վաճառականութեան զարգացման մէջ: Նալբանդեան նկատի ունի ժողովրդի անտեսական կազմն, իր հիմքերով և ամբողջութեամբ: Նա առաջարկում է կարգադրել „անտեսական խնդիրն“, այսինքն արմատօրէն ստեղծել մի նոր կազմ, որն և ինքն առաջարկում է: Եւ նրա կարծիքով, եթէ մի հասարակութիւն անտեսապէս ապահովւած չէ, եթէ այդ հասարակութեան մէջ „չէ կարգադրւած տնտեսական խնդիրը“, նրա գոյութիւնը տարտամ է, նա միշտ ենթակայ է թշւառութեան և աղքատութեան<sup>64</sup>):

„Տնտեսական խնդրի կարգադրութիւնն“ և կամ ժողովրդային ընդհանուր բարեկեցութիւնը նպատակ առնելով, Մ. Նալբանդեան, այս տեսակէտից, թեթև քննում է Եւրոպական հասարակութեան ժամանակակից անտեսական կացութիւնը, գտնելով այն միանգամայն թշւառ: Այս հանգամանքի պատճառը նա համարում է ներկայ „քաղաքակրթութիւնն“, այսինքն կապիտալիզմն ու բուրժուազիան: Այդ սիստէմի մէջ, նախ, անապահով է տնտեսական գոյութիւնը, որովհետև հասարակութեան մի մասը ծառայում է միւսին ու կախումն ունի նրանից, և ապա, չկայ երբէք ազատութիւն, որովհետև մարդիկ, մղւած նիւթական կարիքներով, ստիպւած են ակամայ ստրկանալ, իրանց և ընտանիքի ապրուստի համար: Մի կողմից հողն ու սեփականութիւնն աճում են և կենտրոնանում են, միւս կողմից ինդուստրիան, իր նիւթական շահերի անունով, այլասեռում է հասարակութիւնը, արտադրում է ամեն տեսակ նիւթեր, նոյնիսկ

<sup>64</sup>) Ռուսաստանի ձորերի ազատման օրինակը, յիշատակումէ Մ. Նալբանդեան:



օպիուսմ, որը ներմուծելով Չինաստան, թունաւորում է ամբողջ ժողովուրդներ:

Բացասական գիրք բռնելով գէպի կապիտալիզմը, խոշոր սեփականութիւնն և ինդուստրիան, որոնք քայքայում են ժողովրդական կեանքի անտեսական հաւասարակշռութիւնը, Մ. Նալբանդեան իր աչքերը դարձնում է գէպի հողն ու երկրագործութիւնն, «իբրև ուղիղ ճանապարհ», գէպի գիւղական ժողովուրդը: Ըստ Մ. Նալբանդեանի, ժողովրդային հարստութեան և անտեսական սպահովութեան միակ հիմնական և յարատև աղբիւրը հողն է և միակ ճշմարիտ զբաղմունքն է երկրագործութիւնը: Առանց հողի և երկրագործութեան ժողովուրդը մասնաւոր է կորստեան, իբրև անկայան և անհայ ամբոխ:

Ժողովուրդը պիտոյ է ունենայ հող, նստած լինի այդ հողի վրայ և զբաղւի երկրագործութեամբ: Սակայն հողատիրութեան մէջ պիտոյ չէ որ լինի խոշոր սեփականութիւն: Հողն, իբրև արտադրութիւն ոչ մարդկային ձեռքերի, կարող չէ ճանաչել իբրև բացառիկ սեփականութիւն միքանի մասնաւորների, որովհետև հողը բնութիւնից արւած է ամենքին: Իւրաքանչիւրն առանձնապէս և ամենքը միասին պիտոյ է ունենան իրանց հաւասար հողային բաժինները: Եւ որպէսզի չկատարւի հողերի կենարոնացումն մասնաւոր անհատների ձեռքերի մէջ և չ'առաջանայ հողային խոշոր սեփականութիւն, անհրաժեշտ է օրէնքներով արգելել իւրաքանչիւրի իրաւունքը բաժանել հողից, որևէ կերպ, վաճառմամբ թէ բաշխմամբ: Հողերին տիրում է ընդհանրութիւնը, որի մէջ իւրաքանչիւրը սեփականատէր է իր հաւասար հողաբաժնի: Հողային սեփականութեան այս սխառէմի վրայ պիտոյ է կառուցւի երկրագործական և արդիւնաբերական ձևը, որը պիտոյ է լինի մանր, ընտանեկան, հողային բաժան մասների վրայ, անշուշտ անհատական ոյժերով և մանր գործիքներով:

Իր այս անտեսական կազմը, որը Մ. Նալբանդեան համարում է միակ փրկարարը, որպէս ընդհանուր մարդկութեան, նոյնպէս և հայ հասարակութեան համար, նա առաջարկում է Թիւրքահայերի վերաբերմամբ<sup>65)</sup>: Թիւրքիան, ըստ Մ. Նալբանդեանի, ունի մեծաքանակ պարարտ հողեր, որոնց վրայ առատութեամբ բուսնում են ամեն տեսակ հնդեղէններ և ցանքսեր: Այդ ամենի մշակութեամբ, յիշած ձևով, հայ ժողովուրդը միանգամայն կհաստատուի անտեսապէս և կապահովի իր գոյութիւնը: Սակայն հողերի մշակութիւնը պիտոյ է կատարւի խելացիօրէն և գիտութեան ստեղծած յարմարութիւններով, որպէսզի հողերը չսպառուեն և ժողովուրդը չզրկւի իրան կերակրող մայր—հողի բարիքներից:

Հողային սեփականութեան և երկրագործական արդիւնաբերութեան այս կազմի վրայ հաստատուած, Մ. Նալբանդեանի կարծիքով, հայ ժողովուրդը կարող է տեղ տալ նաև ինդուստրիային, իբրև երկրորդական աղբիւր, որն ապրուստի միջոց է որոշ խաւերի համար և որի ամենայարմար ձևն է անցիծներական—ընկերակցական կազմն: Կարող է ծաղկել նաև վաճառականութիւնը, բայց ոչ ժամանակակից ասիական խարդախ մանրավաճառութիւնը: Ինդուստրիան և վաճառականութիւնը պիտոյ է ծաղկեն խոշոր հիմքերի վրայ և լայն սահմաններով, տեղ ունենալով Եւրոպական շուկաների վրայ: Այս ճիւղի մէջ Մ. Նալբանդեան ընդունում է խոշոր սեփականութիւն:

Այս է Մ. Նալբանդեանի գաւանանքը, նրա անտեսական-հասարակական սխառէմը, որը նա առաջադրում է

65) Թիւրքիան ներկայանում էր այն պատմական միջավայրն, ուր զլիսաւորապէս կենտրոնացած էր հայ ժողովուրդն, սոււարազոյն, աւելի ամբողջական և որոշակի գիրքով: Այս նկատումն, որն ազգայնականութեան բնորոշ գիծն է, Մ. Նալբանդեանից յետոյ, գերակշիռ է երկու յայտնի կուսակցութիւնների մէջ:



ընդհանուր զծերով<sup>66</sup>)։ Մանր սեփականութիւն, մանր հողատիրութիւն, մանր երկրագործութիւն և արհեստներ, և նրանց գուզընթաց, ինդուստրիայ և վաճառականութիւն, խոշոր սեփականութեամբ, որպէս այդ բնորոշ էր Պրուզօնի, նաև սլավեանօֆիլների և Հերցէնի ու Չերնիշեվսկու մէջ, և որի առաջին ու սկզնական աղբիւրը, միջնադարեան հոսանքներից յետոյ, XVIII-րդ դարի ֆրանսիսական ուսուցիսաներն էին։

Գիւղական ժողովրդային մասսաների ներկայացուցչութեան ու պաշտպանութեան այս թէօրիան, XVIII-րդ դարի մեր յիշատակած ուսուցիսաների շրթունքների մէջ, երբ դեռ չկային մեքենային ինդուստրիան և պրօլետարիատ դասակարգն, իր ներկայ իմաստով, ունէր իր ամբողջ ղէմօկրատիզմն ու պատմական վեհութիւնն, իբրև կռիւ ու պայքար սենիօրների և բռնութեան դէմ։ Սակայն XIX-րդ դարի կէսին, Պրուզօնի, և մասամբ Հերցէնի ու Չերնիշեվսկու շրթունքների մէջ, նա դարձաւ մանրացած և աղաւաղած բացասական մի ճիգ, մի անախրօնիզմ։ Անգոր պաշտպանութիւն էր այն մանր սեփականութեան, որովհետև վերջինս արագ ոչնչանում էր կապիտալիզմի հանդէպ, և արտայայտութիւն չէր այն բաները դասակարգի, որն իբրև հասարակական որոշ միութիւն, ունէր իր պատմական տարբեր միտքիան։ Եւ մինչդեռ, այսպէս, XVIII-րդ դարի ուսուցիսաները հեռու

66) Ս. Մանիկեան (պսեւտօնիմ)—Երկրագործութիւնն իբրև ուղիղ ճանապարհ, 1862, Փարիզ։ Որպէս յիշեցինք նախաբանի մէջ, ձեռքի տակ չունենալով յիշած գրքոյկը, տաան տարի յետոյ, միայն յիշողութեամբ, մենք անկարող եղանք վերականգնել նրա երկրորդական հայեացքներն իրանց նրբութիւններով, հարաւորութիւն չունենալով նաև քաղաձքներ յիշատակել բնագրից։ Ի դէպ ասենք, որ Ս. Նալբանդեան անցողակի շօշափում է նաև կողմնակի հարցեր (ինչ է կեանքն, և այլն) որոնց մէջ ցօլանում է իրան ժամանակակից մետաֆիզիքական մատերիալիզմը։

էին հակասութիւնից և դուալիզմից, Պրուզօնի, Հերցէնի և Չերնիշեվսկու թէօրիան քայքայւում էր ներքին դուալիզմով, որովհետև նրանք ակամայ տեղ տւին նաև մեքենաներին, ինդուստրիային և վաճառականութեան, քարոզելով մանր-բուրժուական ակցիօներական ընկերութիւններ, տալով նրանց ուսուցիական-միտքիքական կերպարանք։

Նոյնը չենք կարող ասել Մ. Նալբանդեանի մասին։ Չ'նայած իր թեթև դուալիզմին վաճառականութեան և արդիւնաբերութեան վերաբերմամբ, որը տուրք էր ժամանակակից եւրոպային, նրա մանր հողատիրութեան և երկրագործութեան սիստէմն աւելի անխառն էր և միատիպ, նա աւելի մօտիկ և հարազատ է XVIII-րդ դարի ուսուցիսաներին, ոչ թէ միայն իր դատողութիւններով և զգացմունքներով, այլև պատմականօրէն, քարոզելով իր սիստէմը թիւրքիայի նման մի երկրի համար, ուր 60-ական թւականներին միանգամայն բացակայում էր խոշոր ինդուստրիան։

Մ. Նալբանդեանի ժամանակակից թիւրքիայի տընտեսական կազմն այն էր, ինչ քարոզում էր ինքը Մ. Նալբանդեան, մտածելով յաւերժացնել այն այլևայլ բարեփոխումներով։ Գոյութիւն չունէր ինդուստրիան։ Քաղաքների մէջ, փոքրաթիւ և ոչ բազմամարդ, կային մանր արհեստներ, ներքին շուկայի պահանջի համեմատ, գիւղերի մէջ—նոյն անային արդիւնաբերութիւնն էր, սեփական պիտոյքների համար։ Ժողովրդային մեծամասնութեան զբաղմունքը մանր երկրագործութիւնն էր, հողաբաժինների մանր սեփականութեամբ և անհատական մշակութեամբ։ Սակայն հողատիրութեան այս սիստէմին կից կար և խոշոր հողային սեփականութիւն, պետական թէ մասնաւոր, ինչպէս նաև հողերի վաճառման, գնման և ժառանգական բաշխման և կապալի կամ հունձքի կէսի



մշակութեան յանձնման իրաւունք<sup>67</sup>): Այս ամէնին հակառակորդ էր Մ. Նալբանդեան, առաջարկելով վերացնել, և անխախտ պահպանել հաւատարմանը հողատիրութեան կազմն և ժողովրդին յանձնել բոլոր հողերը:

Այսպէս, 60-ական թւականների թիւրքիան, իբրև կուսական երկիր ինդուստրիայի տեսակէտից, անհամեմատ աւելի նպատակայարմար էր Մ. Նալբանդեանի արնատեսական կազմի համար, քան նոյն թւականների Ֆրանսիան կամ Ռուսաստանը Պրուզօնի և Չերնիշեվսկու նոյնման սխտէմները համար<sup>68</sup>):

Եւ այդիսկ պատճառով, մինչդեռ Պրուզօն կամ Չերնիշեվսկի, կողմակից մանր սեփականութեան և երկրագործութեան, հանդիսանում էին ներկայացուցիչ արդէն որոշուող և քայքայուող մանր արդիւնաբերող դասակարգի, որի հանդէպ զարգանում էին բուրժուազիան և պրօլետարիատը, Մ. Նալբանդեան, նոյն քարոզով, ներկայացուցիչ էր համարեա անխառն մասսայի, մանր արդիւնաբերող ժողովրդի, ոչ իր մրցման մէջ ընդդէմ բուրժուազիայի, այլ իր դեռ անխախտ տիրապետութեան մէջ: Եւ Մ. Նալբանդեան անգիտակից է դասակարգային բաժանման: Նա ճանաչում է միայն ժողովուրդ, կամ իր արտայայտութեամբ, ազգ, որը միապաղաղ հասարակութիւն է, հա-

67) Belin—Essai sur l'histoire économique de la Turquie 1865, թիւրքիայի մէջ ըստ զօրանի, հողերը պատկանում են պետութեան և փատիշահին, որն և այն բաժանում է 3 մասի. 1) պետական սեփականութիւն, 2) մեչեանների, կրօնական ընկերութիւնների սեփականութիւն (վաքուֆ) և 3) մասնաւորների օգտման յանձնած (միւլք): Վերջիններս կարող են անցնել ժառանգաբար և առք ու վաճառքով: Տրուում են կապալով, հունձքի կէտի կամ մի երրորդի փոխաբէն, իսկ տասանորդը—կառավարութեան:

68) Եւրոպայի և Ռուսաստանի անտեսական կազմի և ինդուստրիայի զարգացման մասին կայ ամբողջ գիտական գրականութիւն, թէ օտար լեզուներով և թէ սուսերէն: Տես նաև Marx—Das Capital և այլն:

ւատարմանը սեփականատէրերի համերաշխ համախմբումն: Նրա համար համանիշ են ազգ և մանր արդիւնաբերող դասակարգ, վերջինս կաղապարւած առաջնի մէջ, իբրև միաձոյլ ամբողջութիւն<sup>69</sup>):

Այդ ազգի գոյութիւնը տեսնելով «անտեսական խընդրի» մէջ, Մ. Նալբանդեան բացականչում է. «քարոզենք անտեսական խնդիրը... միսթիքներին—զայթակղութիւն... և հասարակ ժողովրդին—փրկութիւն»:

Այսպէս, 60-ական թւականներին, Մ. Նալբանդեան եղաւ առաջին հայ ուսույիստ թէօրէտիքը, հիմք ունենալով մանր արդիւնաբերական անտեսական սխտէմը: Այնուհետև, հասարակական կեանքի շարժման մէջ, երևան եկան երկու յայտնի կուսակցութիւնները, որոնք ներքին էութեամբ և կողմակիցները կօնսիւնդենտով ժողովրդային կուսակցութիւններ էին, նոյն մանր արդիւնաբերական հիմքերի վրայ: Գիտական տեսակէտից, հայկական հասարակական միտքը, մինչև 90-ական թւա-

69) Մ. Նալբանդեան, աղգայնութեան տեսակէտից, միանգամայն հետու է չօլինիստական գաղափարներից: Ներկայի մէջ ասում է նա, ազգութիւնը պատմական ամբողջութիւն է, որի մէջ ապրում են մարդիկ և որով ճանաչում են մարդկանց: Գծադրաբար կան ազգեր և ոչ մարդիկ: Մենք մնում ենք մեր ազգի զրօշի տակ այն չափով, որքան ուրիշները մնում են իրանց ազգերի զրօշի տակ, որպէսզի ոտնակոխ չանեն մեր մարդկային տարրական գոյութեան իրաւունքները: Բայց Մ. Նալբանդեան, Հերցէնի և ուրիշների սլավեանօֆիլմի ազդեցութեամբ ունեցաւ, այսպէս ասած, իր ասիաֆիլիզմը: Ինչպէս որ Հերցէն «պառաւ Եւրոպան» փոխարինում էր «սլավօնական թարմ ֆազիսով», նոյնպէս Նալբանդեան ասում է թէ Եւրոպան ծեր է, Ասիայի ապագան աւելի մեծ է, որը պիտի մանկանայ և գերակշիռ լինի: Սակայն այս հարցերի, որոնք Նալբանդեանի գրածքի մէջ պատւած են անորոշութեան մութ քօղով, ինչպէս նաև նրա հասարակական կարծիքների մասին մենք կիսօսենք ուրիշ անդամ:



կանների վերջը, կաղապարւած էր այդ թէօրիայի մէջ<sup>70)</sup>, որի նախահայրն եղաւ Մ. Նալբանդեան:

**ՈՒՏՕՊԻԱ, ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

Տնտեսական կեանքի պատմական զարգացման հետ, XIX դարի սկզբից Եւրոպայի մէջ և նոյն դարի կէսից Ռուսաստանի մէջ, մանր արդիւնաբերութեան թէօրիան յաջորդաբար կորցրեց իր հողն, և յետագայի մէջ կրեց վերջնական պարտութիւն:

Շոգեշարժ մեքենաների զիւտով, մանուֆակտուրային յաջորդեց կապիտալիստական խոշոր ապրանքային ինդուստրիան, որն արագօրէն զարգացաւ, անդադար գրաւելով արդիւնաբերութեան նորանոր ճիւղեր և ոչնչացնելով մանր արդիւնաբերութեան սիստէմը, կենտրոնացնելով գրամագլուխն և արդիւնաբերութիւնը: Հողատիրութիւնն և երկրագործութիւնը նոյնպէս դարձան կապիտալիստական: Մանր արհեստաւոր և մանր երկրագործ ժողովուրդը բաժանուեց իր գործիքներից և հողից, բացւեց անտազօնիզմ կապիտալի և աշխատանքի միջև: Իբրև հետևանք այս պրօցէսի, մանր արհեստաւոր և մանր երկրագործ դասակարգը, որի պատմական կեանքն այլևս աւարտւած էր, քայքայւեց անողօք և անդարձ, յաջորդաբար լեցնելով պրօլետարիատի բանակն, իբրև սեփականագուրկ<sup>71)</sup> և վարձկան բանուոր: Տիրապետեց ներկայ կապիտալիզմն, որպէս տնտեսական-հասարակական կազմ, դասակարգերի արդիւնաբերական յարաբերութեամբ, աշխա-

<sup>70)</sup> Տես „Գ.“, մանուաւանդ առաջին թւերը, „Հ.“, „Ն.“—Հ քրօշ. և այլն: Տես մեր յօդւածները „Հանդ.“-ի (1900) և „Բ.“-ի (1904) մէջ:

տանքի բաժանմամբ, մրցմամբ և կրիզիսներով: Հասարակական հրապարակի տէրն այլևս եղան բուրժուազիան և պրօլետարիատը<sup>71)</sup>:

Տնտեսական-հասարակական խնդիրների էութիւնն և որոշումն ստացան բոլորովին ուրիշ կերպարանք: Մանր սեփականութեան ու արդիւնաբերութեան սիստէմի և մանր արդիւնաբերող դասակարգի փոխարէն, որը մինչև այդ ժամանակ բռնապրօսիկ կերպով ճանաչոււմ էր միակ փրկիչ կապիտալիզմից և միակ վճիռ «հասարակական չարիք»ի, հրապարակ եկաւ պրօլետարիատն, իր պատմական նոր միսսիայով, որն այլևս գիտական հետևանք էր կապիտալիզմի տնտեսական-պատմական ընթացքի: Մանր արդիւնաբերող դասակարգի իդէօլօգներին յաջորդեցին պրօլետարիատի իդէօլօգները:

Նոյնը, որոշ սահմանների մէջ, իբրև սկզբնաւորութիւն, մենք պիտի ասենք նաև Թիւրքիայի վերաբերմամբ: Թէև մինչև XIX դարի 70-ական թւականները Թիւրքիան, մի շարք պատերազմների մէջ, խախտեց իր ֆինանսներն և կորցրեց բազմաթիւ նահանգներ, սակայն մանր արդիւնաբերական սիստէմը, թէ արհեստների և թէ երկրագործութեան մէջ, իր համապատասխան դասակարգերով, զեռևս պահում էր երկիրը հաւասարակշռութեան մէջ, իբրև ֆէօդալական պետութիւն: Վերջին ուղւթական պատերազմից յետոյ իրերի ընթացքն արագօրէն փոխւեց: Հուժկու միլիտարիզմն, Եւրօպական պետութիւնների հետ տնտեսական-քաղաքական յարաբերութիւնների, քայքայեցին Թիւրքիայի ֆինանսներն և ժողո-

<sup>71)</sup> Այս խնդիրների մասին տես K. Marx—Das Capital, Engels—Anti-Dhüring: Kautsky—Das Erfurter programm, Die agrarfrage Էնգելսի, Պարվուսի, Կէտի, Ժօրիսի, Լաֆարգի, Ֆերրիի գրւածքներն և ուրիշ բազմաթիւ աշխատութիւններ: Ռուսաստանի մասին—Туганъ-Барановскій—Русская фабрика, Էնգելսի, Կաուտսկու, Պլեխանովի յօդւածները և այլն:



վրդային հարստութիւնը: Պիտոյ է աւելացնել այս ամենի վրայ շռայլութիւնը, կաշառակերութիւնն ու զեղծումները: Պետական օրգանիզմի խոշոր պահանջները և մանր արդիւնաբերութեան միջև բացւեց խօրին անտինօմիա: Խոշոր ինդուստրիան իր ապրանքային հարստութեամբ, դարձաւ պատմական անհրաժեշտութիւն, որը միայն կարող էր բարելաւել երկիրը տնտեսապէս և վերջ տալ կրիզիսին, որի ներքոյ տառապում էին երկրի բոլոր դասակարգերը, քարացած ու սնանկ մանր արդիւնաբերութեան շրջանակների մէջ:

Կապիտալիզմը նախ դրսից, իր ապրանքներով, ճնշեց Թիւրքիայի մանր արդիւնաբերութիւնն, և ապա յաջորդաբար, սկսեց մուտք գործել երկրի ներսը: Եւ 1908 թւի յուլիսեան յեղափոխութիւնից յետոյ, որն իր սահմանադրութեամբ յաղթանակն էր կապիտալիզմի, վերջինս արագութեամբ զարգանում է երկրի մէջ, ի դէմս այլևայլ երկաթուղային ցանցերի, գործարանների և հանքերի մշակման: Թիւրքիան ևս ընթանում է նոյն պատմական ճանապարհով, և մօտիկ ազագային, կապիտալիզմն ու խոշոր ինդուստրիան այնտեղ ևս կտիրապետեն, իբրև տնտեսական կազմ:

Պարզ է, որ խոշոր ինդուստրիայի զարգացման հետ զուգընթաց, Թիւրքիայի մէջ պիտի քայքայւի և ոչնչանայ մանր արդիւնաբերութիւնն, այսինքն այն սիստէմը, որը Մ. Նալբանդեան առաջարկում էր յաւերժացնել, մի շարք փոփոխութիւններով, իբրև միակ կազմ տնտեսական հաւասարութեան: Թերևս մասամբ այս քայքայումից ազատման նպատակով, Մ. Նալբանդեան քարոզում է խստակի օրէնքներով արգելել հողերի գնման, վաճառման և բաշխման իրաւունքը: Բայց ակնայայտ է, որ նախ օրէնքները բղխում են ատրոպ տնտեսական-քաղաքական կազմից՝ և ոչ կանխակալ, ուտօպիական ձգտումներից, և ապա,

նոյնիսկ եթէ հնար լինէր ստեղծել այդպիսի բռնազբօսիկ օրէնքներ, նրանք անշուշտ պիտի ոչնչանային իրանք իրանց, հասարակական էվօլյուցիայի հոսանքի հանդէպ: Եւ միթէ միջին դարերի, օրինակ, Ֆրանսիական կօմմունաների մէջ չկային այդ օրէնքները, որոնք կաշկանդիչ կապանքներ դարձան մանուֆակտուրայի և բուրժուազիայի զարգացման համար, և որոնց ոչնչացման անունով սկսեց երրորդ դասակարգի դարաւոր պայքարը, որն աւարտեց բուրժուազիայի պատմական յաղթանակով: Մասնաւոր սեփականութիւնն և մանր արդիւնաբերութիւնը, որոնք ծագեցին սկզբնական ցեղերի մէջ, նախապատմական ժամանակներից իվեր, արդիւնաբերութեան առաջին գործիքների գիւտի հետ միասին, արդիւնաբերող դասակարգի մէջ պահպանում են որոշ տնտեսական հաւասարութիւն մինչև մի շրջան, երբ զեռ երևան չեն եկել մանուֆակտուրային և ապա ինդուստրիական արդիւնաբերութիւնը: Սակայն վերջիններիս ծագումն անխուսափելի պատմական պրօցէս է ամեն տեղ, որին զուգընթաց կատարում է մանր արդիւնաբերութեան քայքայման և պրօլետարիզացիայի պրօցէսան ու բուրժուազիայի տիրապետութիւնը:

Տնտեսական բարեկեցութիւն և հաւասարութիւն, որին ձգտում է Մ. Նալբանդեան, և մանր արդիւնաբերութիւն, որը նա առաջադրում է իբրև տնտեսական կազմ այդ հաւասարութեան, այս երկուքը բացասող են միմեանց: «Հասարակական չարիքի», կամ որպէս Մ. Նալբանդեանն է ասում, „մարդու և հացի խնդրի լուծումն“ պիտոյ է որոնել միանգամայն տարբեր տնտեսական-հասարակական սիստէմի և ոչ մանր արդիւնաբերութեան մէջ: Եւ այդ որոնումն ու լուծումն ուտօպիական բռնազբօսիկ ցանկութիւն չէ, այլ հեռանք հասարակական-տնտեսական պատմական պրօցէսսի:

Հասարակական ինդիւրների քննութեան մէջ մեր մեկ-



նման կէտը կարող չէ լինել որևէ ուսուցիչական անհատական իդէալ և կամ ձգտումն ժամանակակից իրականութեան անխախտ պահպանման: Պատմական շարժման և պրօցէսսի ըմբռնումն և տնտեսական-հասարակական կազմի ուսումնասիրութիւնը միայն կարող են առաջնորդել մեր միտքը, հասարակական օրեկտիվ շաւղով, դէպի գիտական օրէնքներ և նպատակներ: Պատմութեան անիւր դարերից դարեր անողոք ջախջախել է իր ընթացքի մէջ անհամար իդէալներ, սօզմաներ և սիստեմներ, ասեղնագործած մարդկութեան երջանկութեան անհատական երազներով, թէև այդ անհատները հանձարներ էին, կամ պանելլայից ու Թոմաս Մօրից, մինչև Մաբլի, Մօրելլի, Բաբեօֆ և ուրիշները:

Այդ գիտական օրէնքները մեզ ցուցանում են որ մանր արդիւնաբերութեան դարն աւարտած է Եւրոպայի մէջ, որ պատմական ներկայ ստադիան պայմանաւորւած է խոշոր ինդուստրիայի և բուրժուազիայի տիրապետութեամբ, և որ վերջինս ևս ապրում է իր պատմական սահմանաւորւած շրջանը, պրօլետարիատի հանդէպ: Նոյն այդ գիտական հայեցակէտը մեզ ցուցանում է, որ Թիւրքիայի մէջ, թէև այսօր գերակշռող է մանր արդիւնաբերութիւնը, սակայն գուզընթաց, անողոք աճում են ինդուստրիան, կապիտալիզմն և բուրժուազիան, որոնց դրօշմով կնքւած է յուլիսեան յեղափոխութիւնը և Թիւրքիայի ապագայ պատմական շրջանը: Յուզանում է նա մեզ նաեւ ծնունդը պրօլետարիատի<sup>72</sup>):

<sup>72</sup>) Տես մանրամասն մեր յօդածները. «Հայկական իրականութիւնը», «Ամերիկայի հայ բանւորները», «Անհրաժեշտ ուսումնասիրութիւն» (Հանդէս 1900, նաև «Բան» 1904) «Երիտասարդ Թիւրքիան» (Նոր օրեր 1908), մեր բրօշուրները «Ծր. հ. ս. դ. 4.», «Պրօլ. և հ. ս. դ. 4.», մեր Ֆրանս. տեղեկագիրները ս. մ. կ. ին (1900, 1903 և 1904), նաև «սդ.» երկու թւերը 1904:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԸ:

Թէ Եւրոպայի և թէ Ռուսաստանի մէջ, մանր արդիւնաբերութեան թէօրիան, իր ներկայացուցիչներով, այլևս պատկանում են պատմութեան, իբրև սրող շրջանի արտադրութիւն: Հասարակական կեանքի ներկայ ընթացքի և գիտութեան տեսակէտից, նրանք անկասկած կորցրել են իրանց գոյութեան իրաւունքը, սակայն պատմական տեսակէտից, նրանք ունեն իրանց տեղն ու արժէքն, և միանգամայն արժանի են ուսումնասիրութեան, որը նախ կպատկերացնի մեր առաջ տնտեսական գարդացման այլևայլ ֆազիսներն, և ապա, ուղեցոյց և բացատրիչ կլինի ներկայի վերաբերմամբ, մանաւանդ նոյնանման թէօրիայի անախրօնիք կրկնութեան:

Մ. Նալբանդեան ևս իր թէօրիայով, այլևս մեր առաջ պատկերանում է իբրև պատմական անձնաւորութիւն — ներկայացուցիչ մանր, հաւասար սեփականութեան, մանր երկրագործական արդիւնաբերութեան և մանր արդիւնաբերող դասակարգի: Բայց շնորհիւ այն հանգամանքի, որ Թիւրքիայի մէջ կապիտալիզմը դեռ իր առաջին ֆազիսի մէջ է, և մանր երկրագործութիւնն ու մանր արդիւնաբերութիւնը տիրող են դեռևս, Մ. Նալբանդեան իր թէօրիայով, մասամբ պատկանում է և ներկային: Վաղը Թիւրքիայի մէջ կարող է հրապարակ գալ այդ թէօրիան, ի դէմս որևէ քաղաքական կուսակցութեան, իբրև ձայնը մանր արդիւնաբերող դասակարգի և նրա ճիգն իր պատմական կազմի պահպանման: Սակայն այդ հոսանքն ապագայի մէջ անշուշտ պիտի նուազի, կապիտալիզմի, բուրժուազիայի և պրօլետարիատի զարգացման հետ գուզընթաց:

Թէև իր տնտեսական-հասարակական կազմի դաւանանքով, Մ. Նալբանդեան նախընթաց շրջանի ներկայա-




ցուցիչ է, սակայն նա միանգամայն թարմ ու ժամանակակից է մեզ իր զգացմունքներով, իր մտորումներով և իր եռանդուն տենչերով: Այս ամենը կազմում են նրա հոգեկան աշխարհը, սնուած քաղաքակրթութեան, համերաշխութեան և անտեսական հաւասարութեան ըմբռնումներով, որոնք ծայրից ծայր փայլատակում են զրւածքի մէջ, տալով նրան ոյժ, հմայք և վեհութիւն: Այդ հոգեկան աշխարհն աւելի յատուկ է մի ուրիշ, աւելի բարձր հասարակական կազմի: Այդ կազմի հիմքերը դեռ ձգւած չէին Մ. Նալբանդեանի ժամանակ, մինչդեռ նա, իբրև գիտական մտքի անձնաւորութիւն, անշուշտ պիտի ունենար հիմք և կաղապար իր հասարակական թէօրիայի: Այդ հիմքը նա գտաւ մանր արդիւնաբերական կազմի մէջ, ուր և կաղապարեց իր մտքերն ու զգացմունքներն, իր հոգեկան աշխարհը, որը ս'չ մի աննշուրթիւն չունէր իր անտեսական թէօրիայի հետ: Եւ այս գուալիզմը, նրա հիմնական սիստէմի և նրա մտքերի ու զգացմունքների միջև, նոյնպէս ծայրից ծայր անցնում է զրւածքի մէջ, ցուցանելով սխալանքն ու ոչնչութիւնն այդ կազմի և տաղանդն ու միտքը Մ. Նալբանդեանի:

«Այո, Եւրոպան կանգնած է այսօր մի գժւար լուծահելի խնդրի առջև, այդ անտեսական խնդիրն է, մարդը և հացը: Եւ այդ խնդիրը, կանուխ թէ ուշ, թէև սոսկալի փոթորիկներով, պիտի լուծւի: Ոչինչ բռնութիւն, ոչինչ պահպանողական համակարգութիւն, ոչինչ ընդդիմադրութիւն, որևիցէ կողմից, չպիտի կարողանայ փակել նորա առաջը, թէև, այսօր, հալածական և արստրական են այդ ապագայի մարգարէքը և առաքեալքը»: Այս տողերի մէջ ինքը, Մ. Նալբանդեանն է, իր ձգտումներով, իր տեմպերամենտով, իբրև հասարակական մարտնչողի տիպ, անկախ և անշատ իր անտեսական կազմի դաւանանքից: Եւ իբրև այդպիսի, հսկայօրէն կայ մեր առաջ նա, սրանից կէջ գար

առաջ, հասարակական մտքի և կուլի առաջին զինուորը հայ հասարակութեան մէջ, Եւրոպական իմաստով, որը տառապանքներով և վաղաժամ մահով կնքեց իր հողմավար կեանքը, յանուն իր իղէալների յաղթանակի<sup>73)</sup>:

Տրագիզմի և տանջանքի պսակն է բոլորւած Մ. Նալբանդեանի անւան շուրջ, որը սակայն մինչև այժմ չէ գտել իր արժանի յիշատակումն: Հայ հասարակութեան բոլոր դասակարգերն ևս, միաժամանակ, թէ օտար և թէ հարազատ են համարում նրան: Այս հանգամանքի պատճառը մենք կարծում ենք պարզած ներկայ զրւածքի էջերով:

Մենաւոր էր նրա կեանքի նաւը, որն ելած ընտանի լճերից, լողաց լայն ովկէանների մէջ, դէպի ուրիշ հեռաւոր եզերքներ:



73) Տես մեր յօդւածը „М. Налбандянъ“, газ. „Бакы“, 1910 г. № 110.



## ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Նախարան:	3—4
2) Մ. Նալբանդեանի կենսագրութիւնը:	5—10
3) Ս. Նազարեան, Գ. Արծրունի և Մ. Նալբանդեան:	10—15
4) Մանր արդիւնաբերութեան թէօրիան արևմտեան Եւրոպայի մէջ:	15—28
5) Մանր արդիւնաբերութեան թէօրիան Ռուսաստանի մէջ:	28—35
6) Մ. Նալբանդեանի անտեսական թէօրիան:	36—44
7) Ուսուցիչ և գիտական տեսութիւն:	44—48
8) Մ. Նալբանդեանի պատմական տեղը:	49—51

20. Մամիկոնեան իշխաններ Մուշեղ և Մանուէլ —Մ. Բ. Ղազարեանի . . . . .	— 30 կ.
21. Միքէլ Նալբանդեանի անտեսական թէօրիան —Եր. Պալեանի . . . . .	— 25 „
22. Голодъ—Մ. Ղազարեանի . . . . .	— 30 „
23. Կանոնագիր շտեմարան-գանձարանի— Մ. Ղազարեանի . . . . .	— 2 „
24. Վարկառու բնկերութեան կանոնադրութիւն (փոխադրութիւն) . . . . .	— 30 „
25. Հացահատիկների մարզային կուրսուրան —Գ. Ղարաբոզեանի . . . . .	— 5 „
26. Ինչ քան է դժնասօճն—Բ. Բեչոկոնսկու (թարգմանութիւն) . . . . .	— 5 „
27. Ինձ մի՛ խնդրիր—բուսանս. խօսք Յ. Թումանյանի, ներդաշնակութիւն Ա. Մայիլեանի . . . . .	— 40 „
28. Ոգի Հայաստանի—գունատիպ նկար . . . . .	— 50 „
29. Արտաշէսի յուզարկաւորութիւնը—գունատիպ նկար . . . . .	— 25 „

Պատկեր գտնուում է Միութեան գրասենեակում:  
Հասցեն՝ Баку, Армянский Культурный Союз.









ՀՀ Ազգային գրադարան



NL0196495



